ՄԱՏԹԷՈՍ Ա.
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՇՆՈՐՀՆԵՐԻ ԴՈՒՌԸ

Տպագրութիւն ԱՄՆ Արեւմտեան թեմի
Լոս Անջելէս 2023

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՊԷՍ-ՊԷՍ ՇՆՈՐՀՆԵՐԻ, ԲԱՐԻՔՆԵՐԻ ԵՒ ՓԱՌՔԻ ԴՈՒՌԸ, ԱՄԲԱՐՈՒԱԾ ՍՈՒՐԲ ԳՐՔԻՑ ԵՒ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԵՐԻ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵՄԻՏ ԶԱՒԱԿՆԵՐԻ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Գրաբարից աշխարհաբար փոխադրութիւնը եւ
ծանօթագրութիւնները՝
Գեւորգ Սրկ. Կարապետեանի

Խմբագիր՝ Նորայր Պօղոսեան

ՄԵՂՐԱԾՈՐԱՆ ԳԻՐՔԸ

«Ոսկեղենիկ» մատենաշարի մտայղացումը կը պատկանէ գիտաշխատող և Առաջնորդարանի պաշտօնեայ գրաբարագէտ պրոֆ. Նորայր Պօղոսեանին։

Ներկայ հատորը մինչև օրս հրապարակուած գրքերու շարքին 7-րդն է, որուն պատրաստութիւնը վստահուած էր բարեշնորհ Գևորգ սրկ. Կարապետեանին, որ յանձնառութիւն առաւ թարգմանել և հրատարակութեան պատրաստել Մատթէոս Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսի «Դուռն Աստուածային պէս-պէս շնորհաց բարեաց և փառաց» գրքոյկը։

Արդարև «Դուռն Աստուածային Շնորհաց» գրքի հեղինակը այնքա՜ն պերճախօսութեամբ և հաւատքի խորաթափանցութեամբ ընթերցողին կը ներկայացնէ էական կարևորութիւնը աստուածային շնորհաց ներգործութեանը մեր հոգևոր կեանքի մէջ։ Հեղինակի խօսքերուն մէջ սեղմ երկտող կը ներկայացնէ մեծ հայրապետին տեսիլքը.

«Սուրբ Հոգու բարերարութեան շնորհներով պիտի բացուեն դռները, որոնք գտնուում են վերին կայաններում»։

«Դէպի Աստուած» է եղած հայրապետի հաւատքի նշանաբանը, պատգամ մը, որ այսօր ևս որոշապէս այժմէական է։ Սատար ենք բոլորս յագեցնելու համար մեր հոգևոր կեանքը Աւետարանաշունչ պատգամներով։ Անհրաժեշտ է կարդալ Հայրապետին գրչէն բխած հոգևոր մարգարիտները, որոնք իրապէս կը լուսաւորեն մեր էութեան հոգևոր տաճարը։

Երախտապարտ ենք պրոֆ. Նորայր Պօղոսեանին իր այս նախաձեռնութեանը առիթով, որ անգամ մ՚ևս լոյս կ՚ընծայուի՝ հաւատացեալին կեանքն առաջնորդելու համար առ Աստուած։ Նոյնքան գնահատանքի արժանի է նաև բարեշնորհ Գևորգ սրկ. Կարապետեանի հմտութիւնը զայն գրաբարէն աշխարհաբարի թարգմանութեան կապակցութեամբ։

Հետևաբար, կը քաջալերենք որ այս հատորը հաւատացեալը դարձնէ մեղրը իր հոգիին ու մտքին, որպէսզի մեր հոգևոր կեանքը դարձնենք նաև քաղցրահամ պատգամներ, որոնց առաջնորդութեամբ մեր կեանքը կը լեցուի Աստուծոյ ներկայութեամբ։

Մնանք ջերմ սիրով
Աղօթարար՝



Յովնան Արք. Տէրտէրեան
24 Նոյեմբեր, 2023

ԵՐԿՈՒԽՕՍՔ

19-րդ դարի նշանաւոր հոգեւորական, Ամենայն Հայոց Հայրապետ Մատթէոս Ա. Կոստանդնուպոլսեցին իր ժամանակի ականաւոր գործիչներից էր, հայրենասէր ու եկեղեցանուէր մի անհատականութիւն, որը գիտակցում էր ազգային միասնականութեան եւ հայ ժողովրդի զաւակներին հոգեւոր-բարոյական կրթութեան ճանապարհով դէպի բարօր ապագայ առաջնորդելու կարեւորութիւնը։ Կ. Պոլսի Հայոց պատրիարքութեան գահին բազմելու տարիներից Մատթէոս կաթողիկոսը շարունակաբար ազգային-հայրենասիրական ոգի է սերմանել հայ ժողովրդի զաւակների սրտերում։

Մատթէոս Ա. Կոստանդնուպոլսեցին ծնուել է 1802 թուականին՝ Կ. Պոլսում։ 1826 թուականին օծուել է վարդապետ, 1838-ին՝ եպիսկոպոս։ 1844 թ. Յուլիսի 1-ին ընտրուել է Կ. Պոլսի Հայոց պատրիարք։ 1855 թուականին նշանակուել է Հոգեւոր ժողովի ատենապետ, եղել Արմաշի վանքի վանահայր։ 1855 թուականին օծուել է Ամենայն Հայոց կաթողիկոս՝ յաջորդելով Ներսէս Ե. Աշտարակեցուն։ Մատթէոս Ա. հայրապետը մեծապէս նպաստել է դպրոցական ուսուցման գործի զարգացմանը, կարգաւորել է Մայր Աթոռի մատենադարանի գործունէութիւնը, մեծ

ջանքեր է ներդրել՝ մեղմելու «Պոլոժենիէ»-ի որոշ յօդուածներ եւ ընդլայնելու Ամենայն Հայոց կաթողիկոսի իրաւասութիւնները։ Մահացել է 1865 թուականին՝ Վաղարշապատում եւ ամփոփուած է Էջմիածնի Սբ. Գայանէ վանքի գաւթում։ Որպէս պատրիարք Մատթէոս եպիսկոպոսն իր առաջին իսկ Պատարագի ժամանակ, երկար ընդհատումից յետոյ Կ. Պոլսում յիշատակել է ժամանակի Ամենայն Հայոց կաթողիկոսի՝ Ներսէս Ե. Աշտարակեցու անունը։ Տարիներ անց, երբ իր այս անուանի նախորդի գործը եւ առաքելութիւնը շարունակելու պատիւը բաժին է հասնում իրեն, Մատթէոս Ա. Կոստանդնուպոլսեցին ամենայն պատասխանատուութեամբ յանձն է առնում աստուածընտիր այդ կոչումը։

Որպէս ուսումնասէր եկեղեցական, հմուտ աստուածաբան եւ քարոզիչ՝ հայրապետն աչքի է ընկել իր եկեղեցանուէր ու ազգօգուտ գործունեութեամբ. բացել է հոգեւոր վարժարաններ ու դպրոցներ, նպաստել է արեւմտահայոց Ազգային սահմանադրության ընդունմանը, անզիջում պայքար է մղել այլադաւանների նկրտումների դէմ։

Մատթէոս Ա.-ն հեղինակ է կրօնագիտական ու աստուածաբանական մէկ տասնեակից աւելի երկասիրութիւնների, որոնց մէջ լաւագոյնս արտայայտուած են իր ազգային-հայրենասիրական գաղափարները։

Իր ստեղծագործութիւնների մէջ պարզութեամբ եւ միաժամանակ խորութեամբ առանձնանում է «Աստուածային պէս-պէս շնորհների, բարիքների եւ փառքի դուռը» խորագիրը կրող երկը, որում հայրապետը հայ քրիստոնեայի հայեացքն ուղղում է դէպի Աստուած՝ այն ճշմարիտ Դուռը, որտեղից պիտի գայ քրիստոնեայի եւ, հաւաքական առումով, ողջ Հայ ժողովրդի փրկութիւնը:

Վեց գլուխներից բաղկացած այս ստեղծագործութիւնը ընթերցողին ուսուցանում է քրիստոնէական եւ միեւնոյն ժամանակ համամարդկային մի շարք ճշմարտութիւններ:

Առաջին գլխում խօսւում է քրիստոնէական վարդապետութեան Հիմնադիր եւ Վարդապետ Յիսուս Քրիստոսի մասին, Որը քրիստոնեայի համար Կեանքի այն երանաւէտ Դուռն է, որից ներս մտնելով՝ մարդ կարող է բաժնեկից դառնալ աստուածային պէս-պէս շնորհներին ու բարիքներին:

Եւ հենց դա է գրքի վերնագրի մէջ ամփոփուած խորհուրդը՝ դուռ, որ տանում է դէպ Քրիստոս...

Երկրորդ գլխում հայրապետի քննութեան առանցքը հաւատքն է՝ այն անկորնչելի բանալին, որն ամէն մարդու առջեւ բացում է աստուածային եւ երկնահաս շնորհների ու օրհնութիւնների դռները:

Երրորդ գլխում արդէն Մատթէոս կաթողիկոսը քրիստոնեայի հոգում կանգնեցուած հաւատքի կառոյցը խարսխում է աստուածային յոյսի վրայ,

որպէսզի այդ հաւատքն անսասան ու անխախտ մնայ։ Չէ՞ որ ամէն բան, մինչեւ իսկ մահը ոչինչ է ա՛յն քրիստոնեայի համար, որն իր յոյսը Տիրոջ վրայ է դրել։

Չորրորդ գլխում Հայոց հայրապետը խօսում է քրիստոնէական առաքինութիւններից մեծագոյնի՝ սիրոյ մասին։ Որեւէ մի զօրութիւն, որեւէ մի ուժ անկարող է դիմադրել սիրոյ առջեւ, քանի որ սէրն աւելի զօրեղ է, քան մահը, եւ աւելի բարձրաթռիչ, քան միւս բոլոր շնորհներն ու առանձնաշնորհումները։ Աստուածային սէրն էր, որ Աստծուն երկնքից մինչեւ երկիր խոնարհեցրեց, եւ այդ նոյն սէրն է, որ մարդուն երկրից դէպի երկինք՝ դէպի Երկնքի արքայութեան դուռը պիտի հասցնի։

Հինգերորդ գլխում մանրամասնօրէն խօսւում է քրիստոնէութեան ճանապարհի առաջին քայլի՝ Մկրտութեան սուրբ խորհրդի մասին։ Մկրտուելու սրբազան պատգամը, որի առաջնակատար գործադրողն Ինքը՝ Աստուածորդին եղաւ, անհրաժարելի պայման է իւրաքանչիւրի համար, ով կամենում է հետեւել Քրիստոսին ու քայլել աստուածացոյց այդ ճանապարհով։

Վերջին՝ վեցերորդ գլխում էլ հայրապետի խորհրդածութեան առարկան Ապաշխարութեան սրբարար խորհուրդն է, որը որպէս բալասան ամոքում է մեր հոգին խոցոտող չարահնար վէրքերն ու մեծաձայն դղրդիւնով մեր առջեւ լայնօրէն բացում է փրկութեան դուռը։

Բոլոր վեց գլուխներում էլ Մատթէոս կաթողիկոսն իր խօսքը համեմում է Աստուածաշնչեան մէջբերումներով ու Հայոց Եկեղեցու եւ համաքրիստոնէական մեծագոյն սրբերի՝ Գրիգոր Լուսաւորչի, Նարեկացու, Ոսկեբերանի, Կիւրեղ Երուսաղեմացու եւ այլոց խրատներով ու հոգենորոգ պատգամներով։

Հոգեւոր-բարոյական ազդեցիկ ուժ ունեցող այս երկն իսկապէս արժանի տեղ ունի Մատթէոս Ա. հայրապետի մատենագրական ժառանգութեան մէջ եւ ուսուցողական ու խրատական իր ներուժով մեծ նպաստ կարող է բերել քրիստոնեայի հոգեւոր կրթութեան ու զարգացման գործում նաեւ մեր օրերում։

Յանկանում ենք երախտագիտութեան խօսք ասել ԱՄՆ Արեւմտեան թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանին, որի հովանաւորութեամբ սոյն երկը գրաբարից թարգմանաբար տպագրւում է որպէս «Ոսկեղենիկ» մատենաշարի 7-րդ հատոր՝ ի վայելք ընթերցասէր եւ հաւատաւոր մեր քոյրերի եւ եղբայրների։

Գեւորգ Սրկ. Կարապետեան



ԴՈՒՌՆ

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՊԷՍ ՊԷՍ ՇՆՈՐՀԱՑ ՌԱՐԵՆԱՑ ՆԻ
ՓԱՌԱՑ

ՐԱՄԼԻՅԱՆ ԴՈՒՌՈՒՐԸ ԳՐՈՒՑ

Ի ՏԵՍՈՒԹԻՒՆ ՌԱՐԵՄԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒ
ԻՈՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՈՑԹԴ—1865 ԱՄ

ՏՊԱԳՐԵԱԼ

ԻՍ ԷՋՄԻԱԾԻՆ

«Դուռն Աստուածային Շնորհաց» 1865 թ.
հրատարակութեան տիտղոսաթերթը:

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Նախ պէտք է գիտենալ, որ անթիւ ու բազմատեսակ են աստուածային ամենափափագելի շնորհներն ու բարիքները, որոնք մարդասէր Տէրն Իր խնամառատ գթութեամբ պարգեւում է Իր սիրելիների հոգիներին:

Աստուած մշտապէս կամենում է, որ ամենքը ժառանգեն այդ պարգեւները՝ ուղղափառ հաւատով, սուրբ սրտով ու զարդարուն հոգով առաքինութեան պտղաբեր գործեր կատարելու միջոցով: Դրա համար է, որ սրբազան Պօղոս առաքեալը գրում է. «Աստծոյ ինձ տուած շնորհով այս եմ ասում ձեզնից իւրաքանչիւրին. դուք ձեզ աւելի մի՛ գնահատէք, քան ինչ որ է ձեր արժանիքը. այլ իւրաքանչիւրդ ձեր մասին խորհեցէ՛ք զգաստութեամբ, այն հաւատի չափով, որ Աստուած բաժանեց: Ինչպէս մի մարմնի մէջ բազում անդամներ ունենք, եւ բոլոր անդամները նոյն գործը չեն անում, այդպէս եւ մենք, թուով շատ, մի մարմին ենք Քրիստոսով, բայց իւրաքանչիւրս միմեանց անդամ ենք: Բայց մենք ունենք տեսակ-

տեսակ պարգեւներ, ըստ այն շնորհների, որ տրուած են մեզ» *(Հռոմ. 12:3-6):*

Տեսա՞ր աստուածային տեսակ-տեսակ շնորհների ու պէս-պէս բարիքների առատաձիր պարգեւները, որոնք որպէս ժառանգութիւն պատրաստուած են արժանաւորների համար: Ողջ սրտով ունկնդրի՛ր նաեւ սրբազան Պետրոս առաքեալի խրատական խօսքերը. «Իւրաքանչիւր ոք ինչպիսի շնորհ որ ընդունել է, ուրիշի հանդէպ թող նոյնը մատակարարի որպէս բարի տնտես Աստծոյ պէսպէս շնորհների: Եթէ մէկը խօսի, թող այդ լինի Աստծոյ պատգամների նման: Եթէ մէկը մատակարարի, թող այդ լինի այն զօրութիւնից, որն Աստուած շնորհում է» *(Ա Պետ. 4:10-11):*

Արդ, աստուածային ամենացանկալի, արդարացնող շնորհների եւ երկնաձիր պարգեւների ու փառքի տեսակները պէս-պէս ու բազմապատիկ են, եւ այդ շնորհներից ու փառքից իւրաքանչիւրն ունի սքանչելի եւ պէս-պէս դռներ, որոնք բացւում են արդարների առաջ: Այդ դռները մարգարէական հոգով տեսաւ երջանիկ Դաւիթը՝ փափագելով ու խնդրելով հետեւեալը. «Բացէ՛ք արդարութեան դռներն իմ առաջ, որ մտնեմ ներս ու Տիրոջը գոհութիւն մատուցեմ»*(Սաղմ. 117:19):*

Տեսնո՞ւմ ես, մարգարէն հոգնակի է գրում՝ «արքայութեան դռները», եւ ոչ թէ եզակի, քանի որ, ըստ աստուածային զարմանազան շնորհների, աստուածային արդարութեան զանազան դռներ էր տեսնում, ինչի մասին սուրբ Յովհան Ոսկեբերանը գրում է. «Մարգարէական տեսութեան առջեւ յայտնուել էին աստուածային շնորհների ու զանազան բարերարութիւնների տեսակ-տեսակ դռները, դրա համար էլ նա սկսեց սրտափափագ երգել այսպէս. «Բացէ՛ք արդարութեան դռներն իմ առաջ» *(Սբ. Յովհան Ոսկեբերան, Ճառ ԻԶ):*

Այդպէս նաեւ մեր Նախահայրապետ եւ Լուսաւորիչ սուրբ Գրիգորը մեզ քարոզեց, որ Աստծոյ տեսակ-տեսակ շնորհների համար Երկնքի արքայութեան մէջ բազմատեսակ դռներ կան: Դարձեալ հոգնակի թիւ կիրառելով՝ Լուսաւորիչն ասում է. «Իսկ երբ ծագեց մեր Տէր Յիսուս Քրիստոս՝ Արդարութեան Արեգակը եւ աշխարհի Փրկիչը, առաջնահերթ կատարեալ դարձրեց ու իր լրումին հասցրեց այս մի պակասութիւնը՝ բացելով նոր շնորհների կենսաբեր դռները՝ Աւազանի լուսաւորութեան միջոցով Ամենասուրբ Երրորդութեան հանդէպ ուղղափառ հաւատք հաստատելով... Եւ ովքեր Քրիստոսի սուրբ սիրոյ վրայ են հաստատուած՝ պատրաստ լինելով իրենց անձերը մահուան մատնել Նրա

համար, պիտի ազատուեն երեւելի եւ աներեւոյթ դառնագին վշտերից ու պիտի փրկուեն՝ գործակից եւ բարեխօս ունենալով սուրբերին եւ բոլոր արդարներին: Եւ Սուրբ Հոգու բարերարութեան շնորհնեռով պիտի բացուեն կեանքի դռները, որոնք գտնուում են վերին կայաններում, որտեղ հանգչում են սուրբերի դասերը: Քանի որ Աստուած կամենում է, որ ամենքը գիտակցաբար ճշմարիտ կեանքի ժառանգորդը դառնան, որովհետեւ Տէրը չի ցանկանում մեղաւորի մահը, այլ դարձը դէպի Քրիստոս» *(Յաճախապատում, Ճառ ԺԳ):*

Ուրեմն թող որ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի փրկարար տնօրինութեամբ մենք նոյնպէս արժանանանք Երկնքի արքայութեան ամենացանկալի, երանաւէտ դռները ժառանգելուն եւ սուրբերի երջանիկ դասերի հետ յաւիտեան փառաբանելուն Ամենասուրբ Երրորդութեանը, Որի անարժան ծառան և համայն Ազգիս համար մշտահայց աղօթարարն եմ ես:

Մատթէոս Կաթողիկոս Ամենայն Հայոց

Գլուխ Ա.
ՔՐԻՍՏՈՍ՝ ԴՈՒՌԸ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ

Արդ, յաւիտենական կեանքի երանութեան ամենացանկալի Դուռն Ինքը՝ Քրիստոս է. «Ես եմ Դուռը. եթէ մէկն Իմ միջով անցնելով ներս մտնի, կը փրկուի. կը մտնի ու կ'ելնի եւ ճարակելու բան կը գտնի» *(Յովհ. 10:9):* Այս խօսքի վերաբերեալ սուրբ Յակոբ Մծբնեցի հայրապետը գրում է. «Երկնքի Դուռն Ինքը՝ Քրիստոս է, ինչպէս որ Նա ասաց՝ «Ես եմ Կեանքի Դուռը, եւ ամէն ոք, ով Իմ միջով անցնելով ներս է մտնում, յաւիտեան կ'ապրի»: Եւ Դաւիթն էլ 117:20-րդ Սաղմոսում ասաց. «Տիրոջ Դուռն է սա, եւ արդարները այս Դռնո՛վ պիտի մտնեն» *(Սբ. Յակոբ Մծբնեցի, «Գիրք որ կոչի Զգօն», Ճառ Դ):*

Քրիստոս արդարութեան Դուռն է, սակայն Նա Իր շնորհները փակ է պահում անհաւատների առաջ, եւ մեր ուղղափառ ու սուրբ հաւատն է, որ առաքինազարդ լոյսով բացում է այդ Դուռը, որի վերաբերեալ առաքեալն ասում է. «Ո՛չ թէ նրա համար, որ ունենամ իմ արդարութիւնը, որ Օրէնքից է, այլ

Քրիստոսի հաւատից եղած արդարութիւնը, որ Աստծուց եկող արդարութիւնն է՝ հաւատով» *(Փլպ. 3:9)*:

Սուրբ Ներսէս Լամբրոնացին ասում է, որ ամենքը չէ, որ կարող են գիտութեամբ հասնել այդ հաւատքին, այլ միայն նրա՜նք, ովքեր կրթուած են փորձառութեամբ: Քրիստոսի շնորհներն ու մահը, որով ամենքն արդարացան, Կեանքի Դուռն է, եւ արդարացածները հաւատով արժանանում են երկնային խոստումների հանդէպ յոյսի իրականացմանը: Ինչպէս որ Քրիստոս էլ ասում էր. «Ես եմ Դուռը. եթէ մէկն Իմ միջով անցնելով ներս մտնի, կը փրկուի» *(Սբ. Ներսէս Լամբրոնացի, «Մեկնութիւն Սաղմոսաց»)*:

Իսկ սուրբ Գրիգոր Նարեկացի հրեշտակակրօն Վարդապետն էլ այսպէս է բնորոշում այս Դուռը.

Խոստովանուած անուն, պաշտելի պատկեր,
անպարագիր տիպ,
Երկրպագուած տէրութիւն, բարեբանուած
յիշատակ,
Խնդութեան մուտք, անվրէպ շաւիղ, փառքի
դուռ:
(Սբ. Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», Բան ԼԲ)

Շարակնոցում ենք տեսնում այս մասին գրուած տողեր. «Կեանքի Դուռ, Յիսո՛ւս, մեզ նոյնպէս ներս մտցրու այնտեղ, ուր Քո Հայրը եւ Հոգին են, որպէսզի մշտապէս փառաբանութիւն օրհներգենք» *(Շարակնոց):*

Իսկապէս որ երանելի են նրանք, ովքեր ուղղափառ, ճշմարիտ հաւատով եւ աստուածահաճոյ, առաքինի գործերով զարդարուած՝ մերձենում ու հաղորդակից են դառնում յաւիտենական կեանքին՝ ներս մտնելով երկնային դռներով եւ ժառանգելով Երկնքի արքայութեան յաւէրժական կեանքը:

Տե՛ս, իմաստուն կոյսերը մեզ օրինակ են տալիս երկնայարկ[1] դռները բացելու համար: Իսկապէս որ, նրանք Աստծոյ առջեւ իմաստուն էին, քանի որ ոչ միայն հաւատք ունէին, այլ նաեւ բոցավառուած էին առաքինի գործերով: Դրա շնորհիւ նրանց լապտերները չմարեցին, այլ անշէջ մնացին, իսկ նրանք էլ մուտք գործեցին յաւիտենական կեանքի դռնով ու վայելեցին վերին հարսնարանի[2] յաւիտենական ու-

---

[1] Երկնահաս, երկնքի սեմին գտնուող: Խօսքը Երկնքի օթեւանների՝ Արքայութեան դռների մասին է:

[2] Դեռեւս Հին Կտակարանում Աստուած և Նրա սեփական ժողովուրդը (հնում՝ հրեաները, Քրիստոսի մարդեղութեամբ՝ Փրկչին ապաւինող բոլոր հաւատացեալներս) միմեանց

ռախութիւնը: Այս մասին Յակոբոս առաքեալը գրում է. «Ինչպէս որ մեռած է մարմինը առանց հոգու, այնպէս էլ մեռած է հաւատը առանց գործերի» *(Յակ. 2:26):*

Իսկ ահա միւս հինգ կոյսերն, արդարեւ, յիմարացած էին, քանի որ իրենց հաւատքի լապտերներում բաւականաչափ աստուածահաճոյ իւղ, այն է՝ առաքինի գործեր չունէին, այդ իսկ պատճառով էլ նրանք չարժանացան միեւնոյն հարսնարանի փառքին:

Ուրեմն թող այնպէս չլինի, որ մենք Աստծոյ առջեւ որպէս յիմարներ ներկայանանք՝ միայն Աւետարանական ճշմարտութեան հանդէպ հաւատ

կապուած էին Ուխտի միջոցով, որ յաճախ նմանեցվում էր ամուսնական դաշինքին («Ես պիտի հրճուեմ Տիրոջով, որովհետեւ Նա ինձ փրկութեան զգեստ եւ ուրախութեան պատմուճան հագցրեց, որպէս փեսայի՝ պսակ դրեց իմ գլխին եւ որպէս հարսի՝ զուգեց ինձ զարդով» (Եսայի 61 10, և այլն): Աստուած երկնաւոր Փեսան է, իսկ ժողովուրդը, այն է՝ Քրիստոսի Եկեղեցին, հարսն է, եւ այս երկուսի խորհրդաւոր միութիւնը հարսանեկան այն բերկրալի ուրախութիւնն է, որին քրիստոնեաներիս մասնակից դարձրեց Յիսուս Քրիստոս Իր փրկարար մարդեղութեան, երկրային տնօրինութեան եւ Յարութեան շնորհիւ: Այս համատեքստում «հարսնարանը» Երկնքի արքայութիւնն է, ուր յաւիտենական ուրախութիւն եւ ցնծութիւն է տիրում Քրիստոս-Փեսային հարսնացած սուրբերի բազմութեան համար:

ունենալով, այլ այդ հաւատը հաստատենք աստուա-ծահաճոյ, առաքինի գործերով: Դրա շնորհիւ է, որ պիտի իմաստութեան երանաւէտ գովասանքին ար-ժանանանք Յիսուսի՝ մեր Փրկչի աստուածային շուրթերից, այլ ոչ թէ յիմարութեան «վա՛յ»-ը սպառ-նայ մեզ: Դա յայտնի օրինակով հրամայեց նոյն Ինքը՝ Քրիստոս, այսպէս ասելով. «Ով որ լսում է Իմ այս խօսքերը եւ կատարում է դրանք, կը նմանուի մի իմաստուն մարդու, որ իր տունը շինեց ժայռի վրայ. անձրեւները թափուեցին, եւ գետերը յորդեցին, հողմերը փչեցին եւ զարկեցին այդ տանը, բայց չկործանուեց, որովհետեւ ժայռի վրայ էր հաստատ-ուած: Իսկ ով որ լսում է Իմ այս խօսքերը եւ դրանք չի կատարում, կը նմանուի մի յիմար մարդու, որ իր տունը շինեց աւազի վրայ. անձրեւները թափուեցին, գետերը բարձրացան, հողմերը փչեցին եւ զարկեցին տանը, եւ նա ընկաւ. եւ նրա կործանումը շատ մեծ եղաւ» *(Մատթ. 7:24-27):*

Ահաւասիկ, աստուածային օրէնքներից ու պատուիրաններից ունայն եւ թափուր մնացած յիմարների համար է, որ սուրբերի երանելի դասերը սուգ են անում եւ տրտմում են, ինչպէս որ անում էր Դաւիթ մարգարէն. «Տրտմութիւն իջաւ ինձ վրայ մեղաւորների ու քո օրէնքը լքողների երեսից» *(Սաղմ. 118:53):* Այդպէս նաեւ սրբազան Պօղոս

առաքեալն է գրում. «Ճշմարիտն եմ ասում Քրիստոսով եւ չեմ ստում, – խղճմտանքս է ինձ վկայում Սուրբ Հոգով, որ մեծ տրտմութիւն է ինձ եւ անհատնում ցաւ՝ իմ սրտին» *(Հռոմ. 9:1-2):*

Ըստ այսմ, մենք նոյնպէս մեր խղճմտանքի համաձայն ունկնդիր լինենք մեր Նախակարապետ եւ Լուսաւորիչ սուրբ Գրիգորի խրատական խօսքերի քարոզութեանը, որով նա գրում է. «Իմաստութիւնը քարոզում ենք հոգեպէս կատարեալներին, որոնք կարողանում են զանազանել մշտնջենաւորը՝ անցաւորից: Իմաստութի՛ւն, որ այս աշխարհի՝ կործանման սահմանուած իշխանների իմաստութիւնը չէ, այլ ա՛յն, որն Աստծոյ արդարութիւնն է՝ ճշմարիտ հաւատքով եւ սուրբ սիրով *(Ա Կորնթ. 2:6):*

Սրբութիւն եւ խոնարհութիւն, հեզութիւն եւ ճշմարտութիւն է, բոլոր առաքինութիւններով զօրացած եւ Աստծոյ երկիւղն ունենալով՝ զգուշանալ ամենապատիր[3] խաբկանքներից ու ընտրողական իմաստութեամբ զատորոշել բարի խորհրդածումները, խօսքերը եւ գործերը: Քանի որ Կեանքի իմաստութեան դուռը բաց է, սակայն բազմաթիւ են բանսարկուին գործակից հակառակորդները, որոնք մարդկանց որդիներին որսում են կորստեան

[3] Ամենքին պատրող, խաբող:

մատնելու համար: Սակայն Աստուած չի թողնում Իրեն յուսացողներին, որոնք ցերեկ ու գիշեր Նրան են դիմում *(Ղուկ. 18:7)* եւ խնդրում են ողորմութիւն ու յաղթութիւն՝ ընդդէմ դեւերի բոլոր վնասակարութիւնների, որպէսզի Աստուած փառաւորուի այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն» *(Յաճախապատում, Ճառ ԻԱ):*

Գլուխ Բ.
ՀԱՒԱՏՔԻ ՄԱՍԻՆ

Այո՛, խոստովանում ենք, որ ուղղափառ հաւատի ճշմարտութիւնը եւ աւետարանական անսխալ վարդապետութիւնը յաւիտենական փառքի ու անմահ կենդանութեան երանաւէտ դուռն է, եւ այս ամենացանկալի դռան Հիմնադիրն ու Հաստատողը մեր Տէր Յիսուս Քրիստոս Ինքն է: Այս ճշմարտութեան մասին է վկայում Սուրբ Գիրքը. «Քարն այն, որ շինարարներն արհամարհեցին, ա՛յն դարձաւ անկիւնաքար: Տիրոջից եղաւ այս բանը, եւ սքանչելի է մեր աչքերին» *(Սաղմ. 117:22-23):* Նաեւ՝ «Ահա Ես Սիոնի հիմքում մեծագին քար եմ դնում, պատուական ու ազնիւ անկիւնաքար՝ նրա հիմքում, եւ ով որ հաւատայ նրան՝ չի ամաչի» *(Ես. 28:16)*: Դարձեալ՝ «Սա՛ է այն վէմը, ձեզնից՝ շինողներիցդ անարգուած, որ անկիւնաքար եղաւ: Եւ ուրիշ մէկի միջոցով փրկութիւն չկայ, որովհետեւ երկնքի տակ չկայ մարդկանց տրուած այլ անուն, որով կարելի լինի, որ մենք փրկուենք» *(Գործք 4:11-12)*: Ինչպէս եւ՝ «Ահաւասիկ դնում եմ Սիոնի մէջ քար գայթա-

կղութեան եւ վէմ գլորման. եւ ամենայն ոք, որ հաւատայ նրան, չի ամաչելու» *(Հռոմ. 9:33):*

Ահաւասիկ, քրիստոնէական ճշմարիտ հաւատի այս ամենահաստատ դուռը սիրելի է աստուածային բարեխնամ կամքի համար, ինչի մասին որ գրում է երջանիկ մարգարէ Դաւիթը. «Նրա հիմքերն Իր սուրբ լերան վրայ են. Տէրը սիրում է Սիոնի դարպասներն աւելի, քան Յակոբի բոլոր վրանները» *(Սաղմ. 86:2):*

Եւ ահա, քրիստոնէական ճշմարիտ հաւատքի այս դուռը աստուածային մարդասէր շնորհներով բացւում է նրա՛նց առաջ, ովքեր խղճմտանքով եւ ջերմեռանդութեամբ հետեւում են աւետարանական ճշմարիտ վարդապետութեանն ու առաքելական հոգեբուխ քարոզութեանը. «Եւ երբ եկան ու հաւաքուեցին եկեղեցում, պատմեցին, թէ Աստուած նրանց հետ ինչքան բաներ արեց եւ թէ ինչպէս հեթանոսների առաջ հաւատի դուռը բացեց» *(Գործք 14:26):* Նաեւ՝ «Միաժամանակ աղօթեցէք եւ մե՛զ համար, որպէսզի Աստուած բացի մեր առաջ խօսքի դուռը՝ յայտնելու խորհուրդը Քրիստոսի» *(Կող. 4:3):*

Երբ ջերմեռանդ սիրով ունկնդիր ենք լինում սրբազան գրքերին եւ սուրբ հայրերի հոգեբուխ խօսքերին, արդարեւ, առաջնորդւում եւ գտնում ենք քրիստոնէական ուղղափառ հաւատի դուռը: Իսրա-

յելական ըմբոստ ու ապերախտ ազգին սաստելով՝ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոս այս օրինակն է աւանդում մեզ. «Բայց Ես աւելի մեծ վկայութիւն ունեմ, քան Յովհաննէսինը. այն գործերը, որ Հայրն Ինձ տուեց, որ կատարեմ, այդ նոյն գործերն իսկ, որ անում եմ, վկայում են Իմ մասին, թէ Հայրն է ուղարկել Ինձ: Եւ Հայրը, որ Ինձ ուղարկեց, Նա՛ է վկայել Իմ մասին. դուք ո՛չ Նրա ձայնն էք երբեւէ լսել եւ ո՛չ էլ Նրա երեսն էք տեսել: Եւ ո՛չ էլ Նրա խօսքն ունէք ձեր մէջ բնակուած, որովհետեւ, ում Նա ուղարկեց, դուք Նրան չէք հաւատում: Քննեցէ՛ք Գրքերը, քանի որ կարծում էք, թէ նրանցով յաւիտենական կեանք կ՚ունենաք: Բայց այդ Գրքերն իսկ վկայում են Իմ մասին, որովհետեւ դուք կարծում էք, թէ յաւիտենական կեանք ունէք: Եւ դուք չէք կամենում դէպի Ինձ գալ, որպէսզի կեանք ունենաք: Ես մարդկանցից փառք չեմ առնում: Բայց գիտեմ ձեզ, որ Աստծոյ հանդէպ սէր չունէք ձեր մէջ: Ես եկայ Իմ Հօր անունով, եւ Ինձ չէք ընդունում: Եթէ ուրիշ մէկը գայ Իր անունով, նրան կ՚ընդունէք: Դուք ինչպէ՞ս կարող էք հաւատալ, քանի որ իրարից էք փառք առնում եւ չէք որոնում այն փառքը, որ միակ Աստծուց է գալիս» *(Յովհ. 5:36-44):*

Տեսէ՛ք նաեւ այն օրինակը, որը գրի է առնուած Գործք Առաքելոցում: Եթովպացի երանելի այրը,

ընթերցելով Եսայու մարգարէութիւնը, հետաքրքրուեց այնտեղ գրուած խօսքերով, որի համար եւ Աստծոյ կողմից առաքուեց երանելի Փիլիպպոս առաքյալը, ում առաջնորդութեամբ այդ եթովպացուն հաջողուեց գտնել քրիստոնէական հաւատի դուռը. «Տիրոջ հրեշտակը Փիլիպպոսին ասաց. «Վե՛ր կաց եւ գնա՛ դու հարաւի կողմը՝ այն ճանապարհով, որ իջնում է Երուսաղէմից Գազա, որ անապատ է»: Նա վեր կացաւ ու գնաց: Եւ ահա եթովպացի մի ներքինի, եթովպացիների Կանդակա թագուհու պաշտօնեաներից մէկը, որ նրա բոլոր գանձերի վերակացուն էր ու Երուսաղէմ երկրպագելու էր եկել, վերադառնալիս, իր կառքի մէջ նստած, Եսայի մարգարէ էր ընթերցում: Սուրբ Հոգին Փիլիպպոսին ասաց. «Առաջացի՛ր եւ այդ կառքի մօտ գնա»: Եւ Փիլիպպոսը առաջ վազելով՝ լսեց, որ նա Եսայի մարգարէ էր ընթերցում. ու ասաց. «Հասկանո՞ւմ ես արդեօք, ինչ որ ընթերցում ես»: Իսկ նա ասաց. «Ինչպէ՞ս կը կարողանամ հասկանալ, եթէ մէկն ինձ չառաջնորդի»: Եւ խնդրեց Փիլիպպոսին, որ բարձրանայ ու իր մօտ նստի: Եւ նրա ընթերցած գրքի հատուածն այս էր. «Մորթուելու տարուեց նա ինչպէս մի ոչխար. եւ ինչպէս անմռունչ գառն իր բուրդը խուզողի առաջ, այնպէս էլ նա իր բերանը չի բացում. իր խոնարհութեան պատճառով նրա

դատաստանը տեղի չունեցաւ. եւ նրա ազգատոհմի մասին ո՞վ պիտի պատմի. քանի որ նրա կեանքը երկրից վերացուած է»: Ներքինին հարցրեց Փիլիպպոսին. «Խնդրում եմ քեզ, մարգարէն ո՞ւմ մասին է ասում այս. ի՞ր մասին, թէ՞ մէկ ուրիշի»: Փիլիպպոսը բացեց իր բերանը եւ այդ գրքից սկսելով՝ Յիսուսին աւետարանեց նրան: Երբ իրենց ճանապարհին էին գնում, հասան մի ջրի մօտ: Եւ ներքինին ասաց. «Ահա՛ ջուր, ի՞նչն է ինձ արգելում մկրտուել»: Եւ նա ասաց նրան. «Եթէ քո ամբողջ սրտով հաւատում ես, կարելի է»: Նա պատասխան տուեց ու ասաց. «Հաւատում եմ, որ Յիսուս Քրիստոս Աստծոյ Որդին է»: Եւ ներքինին հրամայեց կառքը կանգնեցնել. երկուսով ջուրն իջան. ե՛ւ Փիլիպպոսը, ե՛ւ ներքինին: Եւ Փիլիպպոսը մկրտեց նրան: Երբ ջրից դուրս ելան, Սուրբ Հոգին իջաւ ներքինու վրայ. եւ Տիրոջ հրեշտակը յափշտակեց տարաւ Փիլիպպոսին, ու ներքինին այլեւս նրան չտեսաւ: Եւ իր ճանապարհին էր գնում ուրախութեամբ» *(Գործք 8:26-39):*

Եթե կամենում ենք նմանուել Քրիստոսին եւ մաս ունենալ Նրա փառքից, ապա մեր կեանքի ընթացքում չպիտի ծուլանանք, այլ մեր միտքը սեւեռենք նպատակակէտին՝ անվեհեր ջանասիրութեամբ ուսուցանելու եւ գործադրելու համար Նրա կամքը: Միայն այդժամ մենք «մեծ» կը կոչուենք

Աստծոյ արքայութեան մէջ՝ ապրելով ըստ այն վարդապետութեան, համաձայն որի Յիսուս Իր տնօրինութեան ժամանակ Ինքը գործեց եւ նոյնն ուսուցանեց Իր ընտրեալներին: Ուստի մեր Փրկչի անցած ճանապարհին նայելով՝ նմանուող լինենք Նրան, եւ մարգարեութեամբ, հայրապետութեամբ ու առաքելական քարոզութեամբ ճանաչենք ամենակալ Հօրը, համազօր Որդուն եւ համագործակից Հոգուն: Եւ թող որ ամենքն էլ ճանաչեն, գիտենան ու սովորեն գործել Արարչի կամքի համաձայն՝ Նրա սիրուց անբաժանելի մնալով թէ՛ նեղութեան եւ թէ՛ անդորրութեան ժամանակ՝ որպէս այդ ամէնի երախտիք Բարերարի կամքով արդարացուած գտնուելով: Ուստի մեր «ճգնութիւնների վաստակը վկայենք Աստծուն եւ մտերմութեամբ օրհնենք Տիրոջը՝ բոլոր բարիքները տուողին, ու գոհանալով փառաւորենք Նրան» *(Յաճախապատում, Ճառ Բ):*

Սուրբ Ներսէս Շնորհալին, հաւատի մասին խօսելով, ասում է. «Հաւատն ունի մէկ անուն, բայց այդ անունը երկու զօրութիւն է բովանդակում: Հաւատի մի տեսակը դաւանաբանական է, որը Սուրբ Երրորդութեան խոստովանութիւնն է: Այս տեսակը իւրաքանչիւր ոք ընդունում է Աւազանից[4]: Հաւատի

[4] Սուրբ Մկրտութեան միջոցով:

երկրորդ տեսակը հետեւեալն է. այն խօսքերը, որոնք Սուրբ Հոգին խօսել է մարգարէների, առաքեալների եւ Եկեղեցու վարդապետների շուրթերով, որոնք էլ իրենց հերթին այդ խօսքերը գրել են սրբազան գրութիւններում, հաւատացեալն առասպել ու ստաբանութիւն չպիտի համարի, այլ պիտի հաւատայ, որ դրանք ճշմարիտ եւ ուղղամիտ են, ու այնպէ՛ս հաւատայ, որպէս թէ իր սեփական աչքերով է տեսնում այն ամէնը, ինչ եղել է, ինչ պիտի լինի եւ ինչը որ կայ: Եղածն այն է, ինչը որ պատմում են, թէ՝ տեսանելի եւ անտեսանելի ողջ բնութիւնն ի սկզբանէ գոյութիւն չունէր, այլ միայն Աստծոյ հրամանով ստեղծուեց, եւ արարածների ստեղծումից յետոյ ամէն բան սքանչելի էր: Աստծոյ կողմից կատարուած այդ զօրաւոր գործերի մասին պատմուում է Սուրբ Գրքում՝ Հին եւ Նոր Կտակարաններում:

Իսկ ահա այն, ինչը որ ասում են, թէ պիտի լինի, հետեւեալն է. բարեգործներին՝ բարի փոխհատուցում Աստծոյ կողմից, իսկ չարագործներին՝ տանջանք եւ յաւիտենական հուր:

Եւ այն, ինչը որ կայ, հետեւեալն է, որ իրենց բոլոր խօսքերում քարոզեն, թէ Աստուած ամենքին մօտ է եւ ոչ թէ հեռու, ու գիտի, թէ մարդիկ ինչ են խորհում իրենց մտքում՝ լինի դա բարի, թէ չար: Եւ ինչ որ խօսում են լեզուով, Նա անսխալաբար լսում է,

եւ յայտնապէս տեսնում է այն, ինչ ծածուկ գործում են մարմնով *(Սբ. Ներսէս Շնորհալի, «Թուղթ ընդհանրական»)*:

Ուստի, սիրելինե՛ր, այսուհետեւ մերձենանք հաւատքին, քանի որ այսօրինակ բազմաթիւ զօրութիւններ կան նրա մէջ: Հաւատքը ոմանց մինչեւ երկինք բարձրացրեց, ոմանք հաւատքով յաղթեցին ջրհեղեղներին: Հաւատքը ամուլներին բազմածին դարձրեց, փրկեց սրի հարուածներից, արձակեց կապուածներին, դուրս բերեց գբից եւ հարստացրեց աղքատին: Դարձեալ, հաւատքը փրկեց հալածեալներին, երկնքից հուր իջեցրեց, բաժանեց ծովը, պատռեց վէմը եւ ծարաւեալներին արբեցրեց ջրով, կերակրեց քաղցածներին, ապրեցրեց մեռեալներին ու փրկեց դժոխքից:

Հաւատքը խաղաղեցրեց փոթորիկները, բժշկեց հիւանդներին ու յաղթեց զօրութիւններին, կործանեց պարիսպները եւ փակեց առիւծների բերանները, շիջանեց հուրն ու խոնարհեցրեց ամբարտաւաններին, իսկ խոնարհներին հասցրեց մեծապատիւ փառքի, եւ այդ բոլոր զօրութիւնները հաւատքի միջոցով գործուեցին *(Սբ. Յակոբ Մծբնեցի, «Գիրք որ կոչի Զգօն», Ճառ Ա)*:

Այս մասին են վկայում նաեւ սուրբ Գրիգոր Նարեկացու խօսքերը.

Քանզի արդարեւ յստակ տեսողութիւնը,
կատարեալ իմաստութիւնը,
Մտերմութիւնն Աստծոյ հետ եւ Բարձրեալին
ծանօթ լինելը
Հաւատքի մասն են - մի երջանիկ եւ ընտրեա՛լ
բառ,
Որ յարատեւելով մնում է անվթար եւ
անպարփակ՝
Պատուակից լինելով յոյսին եւ սիրոյն:
Քանի որ մանանեխի ամենափոքրիկ հատիկի
չափով հաւատքը եթէ
Ձօրեղապէս կարող է ծովի խորքը փոխադրել
մեծամեծ լեռներ,
Ապա ճիշտ է, որ կեանքի առաջնորդն այս
նախաշաւիղ՝
Հաւատն ընդունեցինք որպէս աներկմիտ
աստուածապաշտութիւն:
Սիրոյ եւ յոյսի դասակից եւ Երրորդութեան
փառատրելի անուամբ պատուած
Այդ հաւատքն է, որ հոգու աչքերով
աներկբայօրէն
Տեսնում է ծածուկները բոլոր եւ ապագան:
Քանզի այս երեք առանձին մասերը եթէ
միասին եւ նոյն խորհուրդով դիտես,

Նրանց շնորհիւ Աստծով պիտի յաւէտ
ճոխանաս։
Քանզի եթէ հաւատաս Նրան, որ հաւատարիմ
է, կը սիրես նաեւ,
Որով եւ կը յուսաս Նրա աներեւոյթ
պարգեւներին։
Նրան փա՛ռք յաւիտեանս. Ամէն։
*(Սբ. Գրիգոր Նարեկացի, «Մատեան
ողբերգութեան», Բան ԼԲ)*

Գլուխ Գ.
ՅՈՅՍԻ ՄԱՍԻՆ

Այսպիսով, ամենքս էլ ցանկանում ենք աստուածահաճոյ եւ երանաւէտ յոյսի տեսութիւնը վայելել: Արդ, պէտք է գիտենալ, թէ ի՞նչ է յոյսը: Աստծոյ հանդէպ հաստատուն յոյսը քրիստոնէական ուղղափառ, ճշմարիտ հաւատքի սքանչելի ծնունդն է, որի մասին գրում է սրբազան Պետրոս առաքեալը. «Օրհնեա՛լ է Աստուած եւ Հայրը մեր Տէր Յիսուս Քրիստոսի, որ Իր առատ ողորմութեամբ մեզ վերստին ծնեց կենդանի յոյսի համար՝ մեռելներից Յիսուս Քրիստոսի յարութեամբ. ծնեց անեղծ եւ անարատ ու անթառամ ժառանգութեան համար, որ պահուած է երկնքում ձեզ համար, ձե՛զ, որ Աստծոյ զօրութեամբ պահուած էիք հաւատով՝ փրկութեան համար, որ պատրաստ է յայտնուելու վերջին ժամանակներում» *(Ա Պետ. 1:3-5):*

Սուրբ Ոսկեբերանը, յոյսի առաքինութեան մասին խօսելով, ասում է. «Խիստ թշուառ են այն անհաւատները, որոնց յոյսը հաստատուած չէ ամենակարող Աստծոյ վրայ, քանի որ աներկբայ յոյսի

մայրը ճշմարիտ հաւատքն է» *(Սբ. Յովհան Ոսկեբերան, Յորդորական ճառ, ԺԴ):*

Ուրեմն, յոյսի փառաւոր դուռը ճշմարիտ հաւատքն է, «որի միջոցով էլ կարողացանք հաւատով, մերձենալ այն շնորհին, որի մէջ եւ կանք ու պարծենում ենք Աստծոյ փառքի յոյսով» *(Հռոմ. 5:2):*

Հետեւաբար մենք պարտաւոր ենք մեր աներկբայ յոյսը խարսխել ամենակալ Աստծոյ եւ Նրա ամենակարող Տէրութեան հանդէպ ճշմարիտ, քրիստոնէական հաւատքին: Ահա այս անհրաժեշտ պարտաւորութիւնն է մեր մտքում արթնացնում սրբազան Պետրոս առաքեալը, երբ ասում է. «Թող ձեր հաւատը եւ յոյսը լինեն Աստծոյ վրայ: Արդ, մաքրեցէ՛ք ձեր անձերը հնազանդութեամբ» *(Ա Պետ. 1:21-22):*

Դրա համար էր, որ երջանիկ Դաւիթ մարգարէն երանի էր տալիս Տիրոջը բոլոր ապաւինողներին՝ ասելով. «Երանի՜ բոլոր նրանց, ովքեր յոյսը դրել են Տիրոջ վրայ» *(Սաղմ. 2:14):*

Սաղմոսերգուն կամենում է ասել՝ երանի նրանց, ովքեր իրենց անցաւոր կեանքում ճանաչեցին Աստծուն որպէս ամենակալ Տէր եւ ջերմեռանդ հաւատով պաշտեցին Նրան ու ծառայեցին Նրա բարեխնամ կամքին՝ ամէն հարցում իրենց յոյսը դնելով Տիրոջ ամենակալ զօրութեան վրայ: Այդպիսիք ոչ միայն այս աշխարհում են երանելի կեանք ապրում, այլ նաեւ

դատաստանի օրը պարզերես են կանգնում Աստծոյ առաջ եւ Նրանից ընդունում են կեանքի ու փառքի երանութիւնը:

Այս եղանակով հոգենուագ մարգարէն ոչ միայն ինքն իրեն էր յորդորում հաստատուն մնալ՝ ըստ ասուած խօսքի, այլ նաեւ բոլոր ժողովուրդներին, ազգերին ու ցեղերին է ազդարարում խղճմտանքով կատարելապէս ապաւինել Աստծուն, ու ոչ թէ հարստութեանը, զօրութեանը եւ մարդկային բազկին: Այդ առաջին տեսակի ապաւինութեան՝ Աստծուն յուսալու վերաբերյալ Սաղմոսերգուն ասում է. «Սակայն իմ հոգին հնազանդ կը մնայ Աստծուն, քանզի Նրանի՛ց է իմ համբերութիւնը: Նա է Աստուածն իմ ու Փրկիչն իմ, ապաւէնն իմ, որ չսասանուեմ: Աստծուց է զօրութիւնն ու փառքն իմ, Աստուած է օգնականն իմ եւ Աստծոյ վրայ է յոյսն իմ» *(Սաղմ. 61:6-8):* Իսկ ահա երկրորդ տեսակի՝ մարդկային յոյսի մասին էլ Դաւիթն ասում է հետեւեալը. «Ձեր յոյսը դրէ՛ք Նրա վրայ, ժողովուրդների ո՛ղջ բազմութիւններ, բացէ՛ք Նրա առջեւ սրտերը ձեր, քանզի Աստուած օգնականն է մեր յաւիտեանս յաւիտենից: Սակայն ունայն են մարդկանց որդիները, սուտ են որդիները մարդկանց, իրենց կշռով անարդար են եւ իրենք ամենքն էլ ունայնութեան մէջ են: Յոյս մի՛ դրէք անիրաւութեան վրայ, յափշտակութիւն մի՛

ցանկացէք, եթէ հարստութիւնն առուի պէս իսկ հոսի, թող ձեր սրտերը չցանկանան» *(Սաղմ. 61:9-11):*

Տեսնում ենք նաեւ, որ սրբազան Պօղոս առաքեալը մեծ Նահապետ Աբրահամի հաստատուն յոյսի օրինակն է ցոյց տալիս բոլոր հաւատացեալներին. «Աբրահամը, որ անյուսութեան մէջ էր, յոյսով հաւատաց, որ ինքը կը լինի բազում ազգերի հայր, ինչպէս որ ասուել էր, թէ՝ այսպէ՛ս պիտի լինի քո սերունդը: Եւ նա չերկմտեց իր հաւատի մէջ, թէպէտ նայեց իր մարմնին արդէն իբրեւ մեռած մարմնի, – քանի որ հարիւր տարեկանի մօտ էր, – եւ Սառայի մեռած արգանդին: Բայց Աստծոյ խոստման վրայ չերկմտեց անհաւատութեամբ, այլ զօրացաւ հաւատով, փառք տուեց Աստծուն եւ հաստատապէս համոզուեց իր մտքում, թէ Նա, որ խոստացաւ, կատարելու կարո՛ղ է: Դրա համար այդ նրան որպէս արդարութիւն համարուեց» *(Հռոմ. 4:18-22):*

Սուրբ Գրքից այդ երանութիւնն են ստանում նրանք, ովքեր յուսացել են Աստծուն, իսկ ահա միւսներին, որոնք իրենց յոյսն Աստծուց կտրել են՝ «պաշտելով» իրենց չար կամքին, սպառնում է սոսկալի «վա՛յ»-ը. «Վա՛յ նրանց, որոնք Կայէնի ճանապարհով ընթացան եւ ըստ Բաաղամի մոլորութեան՝ սայթաքեցին վարձի յետեւից ընկնելով եւ

կորան Կորխի պէս իրենց ըմբոստութեան պատճառով» *(Յուդա 1:11):*

Այդ մասին է գրում նաեւ սուրբ Յովհան Ոսկեբերանը՝ ողբալով մեղքի մէջ ընկած Թէոդորոսի համար. «Չարը, խորամանկ լինելով, երբ տեսնում է, որ մեր խիղճը ծանրաբեռնուած է չարութեան գործերով, այդժամ յարձակւում եւ կապարից էլ աւելի ծանր յուսահատութեամբ է կամենում պարուրել մեզ: Եւ եթէ մենք այն ներս ենք թողնում, ստիպուած ենք լինում այդ ծանրութեան պատճառով իսկոյն ցած ընկնել եւ շղթաներով կապուած՝ չարիքի խորքերն ընկղմուել: Այժմ այդտեղ ընկղմուած՝ տառապում ես նաեւ դու, քանի որ մի կողմ թողած քո հեզ եւ խոնարհ Տիրոջ պատուիրանները՝ այն դաժան բռնաւորի ու մեր փրկութեան անողոք թշնամու հրամաններն ես անխտիր կատարում: Դու քաղցր լուծը մի կողմ ես գցում եւ մերժում ես կրել թեթեւ բեռը, սակայն դրա փոխարէն ստրկութեան երկաթէ շղթաներով ես կապկպւում՝ այդպիսով ասէս էշի երկանաքար կախելով պարանոցիցդ» *(Սբ. Յովհան Ոսկեբերան, Ճառ Ա):*

Արդ, հաստատուն յոյսով եւ կենդանի հաւատով Աստծուն ծառայողներն իրենց կեանքի ընթացքում՝ քանի դեռ այս աշխարհի վրայ են, արդարեւ ընդունում են աստուածային երանութիւնը, իսկ բարի

մահուամբ այս աշխարհից հեռանալով էլ՝ հոգով ներկայանում են աստուածային բարերարութեան առաջ ու ժառանգում են յաւիտենական կեանքի եւ փառքի վայելչութիւնը, որի մասին որ գրում է երջանիկ մարգարէ Դաւիթը. «Տիրոջ աչքում յարգելի է մահն Իր սրբերի» *(Սաղմ. 115:15):*

Ուստի մենք, որ Աստծոյ շնորհներով ճանաչեցինք Նրա անյայտ ու ծածկուած իմաստութիւնը, մեր հայեացքը մահուանը յառելը եւ դէպի մահն ընթանալը գեղեցիկ ու զարմանալի մի վայր գնալ ենք համարում *(Բարսեղ Ճոն, «Մեկնութիւն Մարկոսի Աւետարանի, Ճառ Գ»):*

Արի՛ եւ տե՛ս, թէ որքան չար ու թշուառ կեանք է նրա՞նց կեանքը, ովքեր աստուածային ամենակարող զօրութեան հանդէպ հաստատուն յոյս չունեն, ինչի պատճառով էլ այդպիսիք մահուանից յետոյ զրկւում են աստուածային ամէն տեսակի փառքից՝ յաւիտենական չարաչար տանջանքներով լեցուն դժոխքն ընկնելով: Այդ մասին իսկ է այս խօսքը. «Մեղաւորի մահը չարաչար է» *(Սաղմ. 33:22):* Մահը, որ մարդու համար հանգիստ պիտի լինի, չափազանց սոսկալի մի բան է ամբարիշտների համար, քանի որ մահը նրանց տանջանքների սկիզբն է *(Վանական վարդապետ, «Յոբի գրքի 9-րդ գլխի մեկնութիւնից»):*

Այս խօսքերի մասին մեզ ընդարձակ ծանուցում է տալիս մեր Նախահայրապետ եւ Լուսաւորիչ սուրբ Գրիգորը. «Պատուական է, - ասում է մարգարէն, - սուրբերի մահը՝ Ամենակալ Տիրոջ առաջ: Եւ ինչո՞ւ է սուրբերի մահը պատուական. որովհետեւ ճշմարիտ որոշմամբ ցոյց են տուել իրենց սէրն առաքինութեան գործերով՝ յաւիտենականների կեանքին արժանանալու յոյսն ունենալով:

Ինչո՞ւ է պատուական Աստծոյ սուրբերի մահը. որովհետեւ այս անցաւոր կեանքից փոխադրւում են դէպի մշտնջենաւոր կեանք:

Ինչո՞ւ է պատուական Աստծոյ սուրբերի մահը. որովհետեւ այստեղի վշտագին նեղութիւններից փոխադրւում են դէպի բարիքներով լեցուն հանգիստը:

Ինչո՞ւ է պատուական Աստծոյ սուրբերի մահը. որովհետեւ այս թշուառութիւնից ու եղկելի կեանքից փոխադրւում են դէպի երանելի կեանքը:

Ինչո՞ւ է պատուական Աստծոյ սուրբերի մահը. որովհետեւ նրանք ազատւում են հոգու եւ մարմնի ակամայ փորձութիւններից ու փոխադրւում են դէպի անդորրութիւն:

Ինչո՞ւ է պատուական Աստծոյ սուրբերի մահը. որովհետեւ թողնելով ծերութիւնն ու տկարութիւնը՝ փոխադրւում են վերստին նորոգուելու:

Ինչո՞ւ է պատուական Աստծոյ սուրբերի մահը. որովհետեւ այն նոյն սիրով, որով յաղթել են մարմնական բոլոր կարիքները, այդ նոյն սիրով փոխադրւում են Աստծոյ մօտ:

Ինչո՞ւ է պատուական Աստծոյ սուրբերի մահը. որովհետեւ նրանք երկրի վրայ մեռան մեղքերի համար եւ յոյսի փափագով կենդանացան, որպէսզի երբ Քրիստոս՝ մեր Կեանքը, յայտնուի, սուրբերն էլ Նրա հետ փառաւորուեն:

Մեղաւորների մահը չար է, - ասում է մարգարէն, - իրենց դժնդակ, անսուրբ վարքի պատճառով: Իսկ նրանք, ովքեր ատում էին արդարներին՝ նրանց ողջախոհ խորհուրդների պատճառով, պիտի զըղջան, քանի որ գեհենի անշէջ հրին պիտի մատնուեն:

Ինչո՞ւ է մեղաւորների մահը չար. որովհետեւ նրանց վախճանը յուսահատութեամբ է լեցուն, քանի որ մեղանչեցին, սակայն չզղջացին, չապաշխարեցին եւ չհաշտուեցին Աստծոյ հետ:

Ինչո՞ւ է մեղաւորների մահը չար. որովհետեւ նրանք զրկուեցին հրեշտակների ժառանգութիւնից եւ ժառանգորդ դարձան դեւերի հետ ու մատնուեցին յաւիտենական տանջանքների, որոնք նրանց համար պատրաստուել են ամենքի Տիրոջ կողմից:

Ինչո՞ւ է մեղաւորների մահը չար. որովհետեւ հեռանում են այս աշխարհից, ուր ապրում էին

անզգայաբար ու չէին էլ մտածում մահուան օրուայ մասին, այն դէպքում, որ մահից յետոյ այլեւս չեն կարող բարիք գործել ու որպէս դրա վարձատրութիւն՝ մտնել Աստծոյ մօտ:

Ինչո՞ւ է մեղաւորների մահը չար. որովհետեւ լսելու են բոլորիս Տիրոջ խօսքը. «Անիծեալնե՛ր, գնացէ՛ք Ինձնից յաւիտենական կրակը» *(Մատթ. 25:41),* քանի որ նրանք եղել են սատանայի կամակատարները, եւ ո՛չ թէ Աստուծոյ, Որն ամէն բան արարել է Իր բարի կամքով:

Ինչո՞ւ է մեղաւորների մահը չար. որովհետեւ կենդանարար ապաշխարութեան դռները փակուել են նրանց առաջ, ու նրանք այլեւս չեն լսելու Տիրոջ խօսքը. «Դարձէք դէպի ինձ, եւ ես կը դառնամ դէպի ձեզ» *(Մաղ. 3:7):* Այլ նրանց լսելի պիտի լինի այս խօսքը. «Նրանց դո՛ւրս հանեցէք արտաքին խաւարը, որովհետեւ չեն լսել Ինձ» *(Մատթ. 22:13):*

Արդ, մեր խղճմտանքն արթուն պահենք՝ ունկնդիր լինելով մեր ուղղափառ սուրբ Եկեղեցուն, եւ ջերմեռանդութեամբ խնդրենք ու նրա հետ երգենք. «Դու ես իմ յոյսը, Տէ՛ր, քաւիչն իմ յանցանք-

ների, մի՛ անտեսիր իմ արտասուքների հորդահոս աղբիւրը, եւ ողորմի՛ր ինձ, Աստուած»[5]:

Եւ, ի վերջո, աղերսակից լինենք մեր հրեշտակակրօն վարդապետ սուրբ Գրիգորին՝ սրտի խորքերից աղաղակելով այսպէս.

Եւ այսպէս ահա, թէեւ թուլացաւ, հեռացաւ, վերացաւ,
Մասնատուեց, փախաւ, սլացաւ
Եւ տեղի տուեց կենդանութիւնն իմ կենցաղի,
Բայց քո պարգեւած յոյսը հաստատուն՝ պահուած է իմ մէջ,
Որպէս մնայուն եւ անջնջելի յիշատակարան:
Տե՛ս ողորմութեամբ տարակուսանքները վտանգեալիս,
Միա՛յն բարեգութ ու փառաբանուած
Որդիդ Աստծոյ,
Որպէսզի քաւես, բժշկես Դու ինձ եւ կենագործես,
Պաշտպանես, նորոգես, նկարես, կանգնես, հաստատես
Եւ վերստին ստեղծագործես երջանիկ անարատութեամբ:

---

[5] Ապաշխարութեան այս շարականը («Ողորմեա՛» ապաշխարութեան, բկ) երգւում է պահոց օրերին՝ Գիշերային ժամերգութեան ժամանակ, ինչպէս եւ, ըստ հարկի, այլ ծիսապաշտական արարողութիւնների ընթացքում եւս:

Քոնն են կարողութիւնը, փրկութիւնն ու
ողորմութիւնը.
Չունես Դու անկարողութիւն, այլ՝ լիուլի
զօրութիւն.
Բարձրութիւն, իշխանութիւն, անվախճան
թագաւորութիւն,
Իսկութիւն, ինքնութիւն, ամէնուրեք
բացարձակութիւն,
Բարերարութիւն, լուսաւորութիւն:
Փառաւորեալ ես Դու տիրապէս, անպակաս եւ
անյաւելուած,
Խնկուած՝ խորհուրդով անբացատրելի Սուրբ
Երրորդութեամբդ,
Նաեւ առյաւէտ գովաբանուած՝
Հաւասարազօր եւ համապատիւ
համագոյութեան երկրպագութեամբ,
Երեկ եւ այսօր եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

(Սբ. Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», Բան ՀԳ)

Գլուխ Դ.

ՍԻՐՈՅ ՄԱՍԻՆ

Եկէք խօսենք Աստծոյ հանդէպ անխարդախ, ճշմարիտ եւ երանաւետ սէր ունենալու հրաշազարդ կարողութեան մասին, որը յիշատակւում է Հին եւ Նոր Կտակարանների օրէնքների ու պատուիրանների մէջ: Սրանք անդրժելի հրամաններ են՝ սիրելու համար Աստծոյ ամենակալ եւ ամենակարող զօրութիւնն ու անսահման մեծութիւնը. «պիտի սիրես քո Տէր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ մտքով եւ քո ամբողջ զօրութեամբ» *(Բ Օրին. 6:5,Մարկ. 12:30):*

Այս մասին է գրում նաեւ մեր երանելի սուրբ վարդապետ Իգնատիոսը. «Մեծագոյն բարի ա-րարքն Աստծուն սիրելն է, որը, օրէնքի մէջ ամրագրուած լինելով, նաեւ աւետարանուեց Տիրոջ կողմից: Յարկ է մեր ամբողջ զօրութիւնն ու ամբողջ կամքը դէպի Նա ուղղել, եւ մերժել այն ամէնը, ինչը հակասում է Աստծոյ հանդէպ սիրուն: Իսկ նրանք, ովքեր կարծում են, թէ բարիք են գործում, սակայն

իրենց արարքներով մերժում են այն սէրը, որն Աստծոյ մօտ է[6], այդպիսիք պիտի հրաժարուեն ի-րենց այդ չարաբարոյ ու վնասակար բարեպաշտու-թիւնից եւ միայն Աստծոյ սէրը պիտի հայցեն» *(Սուրբ Իգնատիոս Աստուածազգեաց, «Մեկնութիւն Ղուկա-սի Աւետարանի):*

Ահա այս սքանչելի սէրն է երանութեան այն մշտաբաց դուռը, որի մասին սուրբ Գրիգոր Աստուա-ծաբանը գրում է. «Այնքա՞ն հրաշալի է այս դուռը, որ այս դռնով մշտապէս կարող ենք համարձակօրէն ներս մտնել ու մօտենալ Աստծուն: Եւ Ինքը՝ Աստուած էլ, որ ըստ ամենայնի անբովանդակելի է, այս նոյն դռնով դէպի մեզ է գալիս ու Իր մարդասիրութեամբ հաճում է բնակուել մեր մէջ»: Ինչպէս վկայում է սրբազան Յովհաննէս Աւետարանիչը՝ «Աստուած

---

[6] Սուրբ Իգնատիոս հայրապետը, «Աստծոյ մօտ գտնուող սէր» ասելով, արտայայտում է Յովհաննէս առաքեալի այն աստուածաբանութիւնը, համաձայն որի՝ Բանն Աստուած՝ մարդացած Քրիստոս Ի՞նքն է կատարեալ սէրը: Իր Աւե-տարանի առաջին իսկ համարում առաքեալն ասում է. «Սկզբից էր Բանը, *եւ Բանը Աստծոյ մօտ էր*, եւ Բանը Աստ-ուած էր» *(Յովհ. 1:1)*: Յետեւաբար, «Աստծոյ մօտ գտնուող սէրը» մերժողները նրանք էին, ովքեր մերժում էին Քրիս-տոսին՝ հրաժարուելով ապրել ըստ քրիստոսաւանդ պատ-ուիրանների:

սէր է. եւ ով սիրոյ մէջ է ապրում, բնակւում է Աստծոյ մէջ, եւ Աստուած բնակւում է նրա մէջ» (Ա Յովհ. 4:16):

Ահա այս սիրոյ հոգեղէն դուռն Ինքը՝ Աստուած հաստատեց, քանի որ այս սքանչելի դռնով Աստծոյ Միածին Որդին՝ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոս առաքուեց աշխարհ՝ մարդկութեան փրկութեան համար, որի մասին գրուած է. «Սրանո՛ւմ է սէրը. մենք չէ, որ սիրեցինք Աստծուն, այլ նա՛ սիրեց մեզ եւ ուղարկեց Իր Որդուն մեր մեղքերի քաւութեան համար» *(Ա Յովհ. 4:10):* Սրբազան աւետարանչի այս խօսքի վերաբերեալ մեր սուրբ վարդապետ Սարգիս Շնորհալին գրում է. «Սրանո՛ւմ է, - ասում է, - սէրը. մենք չէ, որ սիրեցինք Աստծուն: Այս ասելով՝ մեր ապերախտութիւնն է ցոյց տալիս, եւ դրան հակառակ՝ Աստծոյ անեզր մարդասիրութիւնը: Քանի որ ոչ թէ մենք ելանք Աստծուն փնտրելու, ոչ թէ մենք գտանք Նրան ու սիրեցինք այնպէս, ինչպէս պարտաւոր էինք սիրել՝ այդպիսով երախտագէտ լինելով մեզ տրուած պարգեւների համար, այլ նախ Նա՛ սիրեց մեզ, ինչպէս ասում է Աւետարանիչը: Սիրեց մեզ, չնայած որ մենք հակառակորդ ու թշնամի էինք Նրան: Եւ սիրեց անեզր սիրով ու Իր Հայրական ողորմութեամբ գթաց մեզ, եւ թէպէտ մենք մեղքեր ու անօրինութիւններ էինք գործում, Նա խնամակալ եղաւ մեզ: Եւ առաքեց Իր Որդուն՝ մեր մեղքերի

քաւութեան համար, այսինքն՝ Արդարին ուղարկեց անարդարներիս համար մեռնելու եւ այդպիսով մեզ փրկելու: Եւ Սուրբը՝ պիղծերիս, ու Անմեղը՝ մեղաւորներիս համար մեռաւ: Եւ եթէ այնժամ, քանի դեռ թշնամացած էինք Աստծուն, Նրա հետ հաշտուեցինք Աստուածորդու մահուամբ, ինչպէս որ ասում էր Պօղոսը, ապա որքա՜ն առաւել կենսունակ պիտի դառնանք Աստծոյ հետ հաշտուելուց յետոյ՝ Աստուածորդու կեանքով ապրելով» *(Սբ. Սարգիս Շնորհալի, «Մեկնութիւն Ա Յովհ. 4:10, Ճառ Է»):*

Ահա թէ ինչու իւրաքանչիւրս էլ պարտաւոր ենք, հոգենուագ Դաւիթ մարգարէին ձայնակից լինելով, ողջ սրտով աղաղակել մեր Փրկիչ Աստծուն, Որի անունը Սէր է. «Սիրում եմ Քեզ, Տէ՛ր, զօրութի՛ւն իմ, ո՛վ Տէր, պահպանի՛չ իմ, ապաւէ՛ն իմ եւ փրկի՛չ» *(Սաղմ. 17:2):*

Արդ, եթէ կամենում ենք տեսնել, որ սէրը առաքինութեան բոլոր գործերից ամենագերազանցն է, ուրեմն հոգու աչքերով խորասոյզ լինենք սրբազան Պօղոս առաքեալի խօսքերի մէջ, որը սիրոյ զօրութիւնը համեմատութեան մէջ դնելով միւս առաքինութիւնների հետ՝ սէրն ամէն բանից աւելի մեծ է համարում եւ հաստատագրում է, որ ոչ միայն փոքր, այլեւ ամենամեծ առաքինութիւններն առանց սիրոյ լծորդութեան որեւէ օգուտ չեն կարող ունենալ:

Ըստ այդմ՝ առաքեալը գրում է. «Եթէ խօսեմ մարդկանց լեզուները եւ հրեշտակներինը, բայց սէր չունենամ, կը նմանուեմ մի պղնձի, որ հնչում է, կամ՝ ծնծղաների, որ ղօղանջում են: Եւ եթէ մարգարէ-ութիւն անելու շնորհ ունենամ եւ հասկանամ բոլոր խորհուրդներն ու ամբողջ գիտութիւնը, եւ եթէ ունենամ ամբողջ հաւատը՝ մինչեւ իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սէր չունենամ, ոչինչ եմ: Եւ եթէ իմ ամբողջ ունեցուածքը տամ աղքատներին եւ իմ այս մարմինը մատնեմ այրուելու, բայց սէր չունենամ, ոչ մի օգուտ չեմ ունենայ: Սէրը համբերող է, քաղցրաբարոյ է. սէրը չի նախանձում, չի ամբար-տաւանանում, չի գոռոզանում, անվայել վարմունք չի ունենում, իրենը չի փնտռում, բարկութեամբ չի գրգռւում, չար բան չի խորհում, անիրաւութեան վրայ չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմար-տութեան վրայ. ամէն բանի դիմանում է, ամէն բանի հաւատում է, մշտապէս յոյս է տածում, ամէն բանի համբերում» *(Ա Կորնթ. 13:1-7):*

Երանի՜ նրանց, ովքեր այսօրինակ աստուածա-սիրութեան սքանչելի զօրութիւնն ունեն իրենց անձերում: Այդպիսիք համարձակօրէն կարող են ձայնակից լինել սրբազան Պօղոս առաքեալին նաեւ այս խօսքերում. «Արդ, ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիս-տոսի սիրուց. տառապա՞նքը, թէ՞ անձկութիւնը, թէ՞

հալածանքը, թէ՞ սովը, թէ՞ մերկութիւնը, թէ՞ վտանգները, թէ՞ սուրը, ինչպէս գրուած էլ է. «Քեզ համար ենք մեռնում ամէն օր. համարուեցինք որպէս ոչխար սպանդի համար»: Բայց այս բոլորից է՛լ աւելի յաղթական ենք դուրս գալիս նրա միջոցով, ով սիրեց մեզ. որովհետեւ վստահ եմ, թէ ո՛չ մահը, ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանութիւնները, ո՛չ այլ բաներ, որ այժմ կան, ո՛չ գալիքները եւ ո՛չ զօրութիւնները, ո՛չ բարձրութիւն, ո՛չ խորութիւն եւ ո՛չ մի ուրիշ արարած չի կարող բաժանել մեզ Աստծու այդ սիրուց, որ կայ մեր Տէր Քրիստոս Յիսուսով» *(Հռոմ. 8:35-39):*

Առաքելական այս պանծալի խօսքերի զօրութեան համար հաստատուն հիմք է ծառայում մեր Տէր Յիսուս Քրիստոսի անժխտելի հրամանը. «Ինչպէս Իմ Հայրն Ինձ սիրեց, Ես էլ ձեզ սիրեցի. Իմ սիրոյ մէջ հաստատո՛ւն մնացէք: Եթէ Իմ պատուիրանները պահէք, կը մնաք Իմ սիրոյ մէջ, ինչպէս Ես Իմ Հօր պատուիրանները պահեցի եւ մնում եմ Նրա սիրոյ մէջ» *(Հովհ. 15:9-10):*

Ահա այս ամէնի պատճառով է, որ մենք պարտաւոր ենք մեր անձերը հեռու պահել աշխարհասիրութիւնից ու փառասիրութիւնից, տեղի չտալ անձնասիրութեանը եւ արծաթասիրութեանը, քանի որ, եթէ այդպէս վարուենք, աստուածասիրութեամբ

Աստծուն բարեկամ դառնալու փոխարէն մեր աշխարհասէր հոգով Աստծուն թշնամի եւ Նրա կողմից իսկապէս ատելի կը դառնանք՝ ըստ սրբազան Յակոբոս առաքեալի այս խօսքի. «Շնացողնե՛ր, չգիտէ՞ք, որ սէրը այս աշխարհի հանդէպ՝ թշնամութիւն է Աստծոյ դէմ, քանի որ, ով ուզում է աշխարհը սիրել, Աստծուն իրեն թշնամի կ'անի» *(Յակ. 4:4):*

Արդ, ի՞նչ անենք, եղբայրնե՛ր, որպէսզի ճշմարիտ աստուածասիրութեան զօրութիւնն ու ներգործութիւնը մեր անձերում սեփականենք: Մեր երկնաւոր Վարդապետ ու Փրկիչ Յիսուս Քրիստո՛ս է դա մեզ ուսուցանում. «Ով Իմ պատուիրաններն ընդունում եւ դրանք պահում է, նա՛ է, որ Ինձ սիրում է. եւ ով Ինձ սիրում է, պիտի սիրուի Իմ Հօրից. Ես էլ նրան պիտի սիրեմ եւ Ինձ պիտի յայտնեմ նրան» *(Հովհ. 14:21):*

Եթէ փութանք կատարել օրէնքի եւ պատուիրանների աստուածային պատգամները, այդժամ կարող կը լինենք նաեւ համարձակաբար, մեր խղճի ձայնով երգակից լինելու հոգենուագ Դաւիթ մարգարէին ու բացականչելու. «Ատեցի անօրէններին եւ Քո օրէնքը սիրեցի» *(Սաղմ. 118:113),* եւ թէ՝ «Ատեցի ու արհամարհեցի մեղքը, եւ Քո օրէնքը սիրեցի» *(Սաղմ. 118:163):*

Արդ, եթէ կամենում ենք մեր աստուածասիրութեան մէջ բազմատեսակ, հոգեպարար քաղցրու-

թիւն վայելել, ուրեմն ունկնդիր լինենք մեր Նախահայրապետ եւ Լուսաւորիչ սուրբ Գրիգորին. «Սուրբ սէրը մայրն է առողջութեան, անարատութեան ու անբծութեան, որ խնամում ու յորդորում է առաքինութիւն գործելու եւ յարդարում է բազմատեսակ բարեգործութիւններով:

Սէրը բոլոր բարիքների աղբիւրն է, որն արբեցնում է սուրբ անձերին: Այն գրաւականն է Աստծուց բաշխուող բոլոր երանութիւնների ու մեծամեծ պարգեւների:

Սէրը բխեցնողն է Քրիստոսի երախտիքների, Նրա անպատմելի շնորհների վայելքներն ընծայողն է, խռովութիւնները լուծարողը եւ խաղաղութեան պարգեւիչը, մտքի ու մարմնի անդամների լուսաւորիչը:

Սուրբ սէրը հոգու եւ մարմնի անեղծելի ստացուածքն է նրանց համար, ովքեր մշտապէս կրում են այն իրենց մէջ: Այդպիսիք օժտուած են Քրիստոսի կենդանի շնորհներով՝ յարդարուելով ամենաօգտաւէտ երանութիւններով՝ ի գովեստ Աստծոյ փառքի:

Սէրը կենդանի յոյսի աւետիսն է, նեղութեան ու վշտերի սփոփիչն եւ լուծիչն այն բոլոր վերահաս դժնդակութիւնների, որոնք զինուել են առաքինութեան սխրագործութիւնների դէմ:

Սէրն իր սուրբ երախտիքներով մի խաղաղարար հրեշտակ է, որ մերժում է ցասումը եւ լուծարում է խռովութիւնը, դուրս է մղում նախանձն ու խոնարհեցնում է չարին:

Սուրբ սէրը վայելուչ այգի է, որն իր խաղողով ու գինով զուարթացնում է տրտմութիւններով լցուած սիրտն ու զգայարանները եւ ուրախացնում է Տիրոջ կամքով:

Սուրբ սէրը պտղալից ձիթենի է, որը բարեխոհ մարդու սրտին ձէթ է մատակարարում՝ լուսաւորելու համար նրա հոգեւոր իմացութեան ուղին եւ օծելու նրա մարմնական անդամները՝ զուարթութիւն պարգեւելով նրան:

Սուրբ սէրը հոգեւոր կարգերի յարդարիչն է եւ մարմնական վարքի յանձնարարիչը, որն այս երկուսն իրար է կապում ու թոյլ չի տալիս բաժանել եւ քայքայել ընդհանրական բարիքը:

Սուրբ սէրը բանալին էԿեանքի Դռան, որը կեանք է բաշխում: Այդ սէրը սուրբ անձերին Աստծոյ աներեւոյթ շնորհների գանձերն է պարգեւում, այն դժնդակ վարքի խափանիչն ու մեղքերի դէմ մարտընչողն է: Քանի որ առաքինութեան բոլոր արուեստներն էլ սիրոյ միջոցով են յարդարւում սրբութեամբ ու արդարութեամբ: Եւ սիրոյ միջոցով են ցոյց տալիս իրենց բարութեան գործերը,

որովհետեւ այն չարը ուղղողն է եւ բարութեան յորդորողը, աստուածասէրների զօրավիգն ու խորամանկների եւ մեղսասէրների կործանիչը:

Սուրբ սէրը հաւատքի ու յոյսի հետ միաբանելու արդիւնքում ծնւում է բարեպաշտ վարքը, եւ այդ երեքի խաղաղ միակեցութեամբ ի յայտ են գալիս լուսաւոր կարգերը: Որովհետեւ առաքինութեան հետ մեկտեղ այդ երեքը պատճառ են դառնում, որ անձը երկնաւոր Հօր քաղցրանուշ յոգածութեան լուսատու թագով պսակադրուի ու վայելի Նրա անվախճան եւ անպատում բարիքները:

Քանի որ նրանք, ովքեր սուրբ սիրոյ խնամքներն է տածում ամենքի՝ հեռաւորների եւ մերձաւորների, հոգիների ու մարմինների հանդէպ, նրանք սուրբ սիրոյ երանութիւններով ամենայն ճշմարտութեամբ օրհնուելով Ամենասուրբ Երրորդութեան կողմից՝ պսակադրւում ու մեծարւում են եւ մշտնջենաւոր խնդութեամբ վայելում են Տիրոջ անվախճան ու որեւէ բանի հետ անհամեմատելի բարիքները» *(Յաճախապատում, Ճառ ԺԱ):*

Գլուխ Ե.
ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Այժմ մօտենանք Մկրտութեան սրբարար խորհրդի մասին ուսմունքին, որը մեր Տէր Յիսուս Քրիստոս Ինքը սահմանեց Իր սրբազնասուրբ Անձով, երբ խոնարհուեց Յորդանան գետի ջրերի մէջ ու յանձն առաւ մկրտուել Իր ծառայի ձեռքով. «Այն ժամանակ Յիսուս Գալիլիայից Յորդանան եկաւ, Յովհաննէսի մօտ՝ նրանից մկրտուելու: Իսկ Յովհաննէսն ընդդիմացաւ նրան ու ասաց. «Ի՞նձ պէտք է, որ քեզնից մկրտուեմ, եւ դու ի՞նձ մօտ ես գալիս»: Յիսուս պատասխանեց եւ ասաց նրան. «Թո՛յլ տուր հիմա, որովհետեւ այսպէս վայել է, որ մենք կատարենք Աստծու ամէն արդարութիւն»: Եւ ապա նրան թոյլ տուեց: Եւ երբ Յիսուս մկրտուեց, իսկոյն ջրից դուրս ելաւ. եւ ահա երկինքը բացուեց նրան, եւ նա տեսաւ Աստծու Հոգին, որն իջնում էր ինչպէս աղաւնի եւ գալիս էր իր վրայ: Եւ ահա՝ մի ձայն երկնքից, որ ասում էր. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որն ունի իմ ամբողջ բարեհաճութիւնը» *(Մատթ. 3:13-17):*

Մկրտութեան ահա այս սրբազան խորհուրդը բազմատեսակ շնորհներով ներգործում է մկրտուողների հոգիների վրայ, եւ այս խորհուրդն առաջինն է բացում Երկնքի արքայութեան կեանքի ու փառքի դուռը, ինչի մասին որ մեր Փրկիչ Յիսուս վճռականօրէն աւետարանեց հրեաների Նիկոդէմոս անունով իշխանին. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթէ մէկը ջրից ու Հոգուց չծնուի, չի կարող Աստծու արքայութիւնը մտնել» *(Յովհ. 3:5):*

Իսկ երբ «ծագեց» մեր Տէր Յիսուս Քրիստոս՝ արդարութեան Արեգակն ու աշխարհի Փրկիչը, առաջինն Ինքը կատարեց եւ լրացրեց պակասութիւնը, քանի որ բաց արեց նոր շնորհների կենսաբեր դռները՝ Աւազանի լուսաւորութեան միջոցով Ամենասուրբ Երրորդութեան հանդէպ ուղղափառ հաւատք հաստատելով *(Յաճախապատում, Ճառ ԺԳ):*

Նոյն մտքի մասին է գրում Երուսաղէմի հայրապետ սուրբ Կիւրեղը՝ իր խօսքն ուղղելով այն նորահաւատներին, որոնք մօտենում են Մկրտութեանը. «Ուրեմն, քանի որ մարդը երկակի է՝ բաղկացած հոգուց և մարմնից, այդ երկուսն էլ պիտի մաքրուեն. անմարմինը՝ անմարմնով, իսկ մարմնաւորը՝ մարմնաւորով: Արդ, ջուրը մաքրում է մարմինը, իսկ Սուրբ Հոգին կնքում է հոգին, որպէսզի Սուրբ Հոգով ցողուած սրտով և մաքուր ջրով լվացուած մարմնով

կարողանանք մօտենալ Աստուածութեան մեծութեանը: Արդ, երբ դու սուզուես Մկրտութեան ջրի մէջ, այդ ջուրը սովորական մի ջուր մի՛ համարիր, այլ Սուրբ Հոգու զօրութեամբ այդ ջրից փրկութիւն ակնկալիր: Քանի որ առանց այս երկուսի անհնար է, որ դու կատարեալ լինես: Այս ասողը ես չեմ, այլ Ինքը՝ Տէր Յիսուս Քրիստոս, Որ իշխանութիւն ունի այս հարցում եւ այսպէս է ասում. «Եթէ մարդ չծնուի ջրից եւ Սուրբ Հոգուց, չի կարող մտնել Աստծոյ արքայութիւն»: Եւ ոչ էլ նա, ով թէպէտ ջրով մկրտուել է, սակայն արժանի չի եղել Սուրբ Հոգին ընդունելուն, կարող կը լինի կատարեալ շնորհ ստանալ: Եւ նոյնիսկ նա, ով թէպէտ բազմաթիւ պիտանի գործեր է արել, սակայն Մկրտութեան ջրով Սուրբ Հոգու դրոշմը չի ստացել, անկարող կը լինի Երկնքի արքայութիւն մտնել» *(Սբ. Կիւրեղ Երուսաղեմացի, «Կոչումն ընծայութեան», Բան Գ):*

Տե՛ս, թէ սրբարար Մկրտութիւնը մեզ ինչպիսի՜ սքանչելի շնորհներ է պարգեւում, քանի որ մեզ հաղորդակից է դարձնում մեր Կենսատու Յիսուս Քրիստոսի փրկարար զօրութեանը եւ կամաւոր մահուանը: Ուրեմն, ինչպէս որ Քրիստոսի մահը ոչնչացրեց մեր սկզբնական մեղքի զօրութիւնը, նոյնպէս եւ Մկրտութեան խորհուրդն է մեր միջից ոչնչացնում մեղքի ներգործութիւնը: Իսկ Աւազանի

ջրի մէջ երեքանգամեայ ընկղմումը խորհրդանշում է Քրիստոսի երեքօրեայ թաղումը, մկրտուողին Աւազանից դուրս հանելը՝ Յիսուսի Յարութեան խորհուրդը, ինչպէս որ յայտնապէս հաստատում են այս մասին առկայ վկայութիւնները. «Կամ չգիտէ՞ք, թէ մենք բոլորս, որ մկրտուեցինք Յիսուս Քրիստոսով, Նրա մահո՛վ է, որ մկրտուեցինք: Մկրտութեամբ թաղուեցինք Նրա հետ մահուան մէջ, որպէսզի, ինչպէս որ Քրիստոս մեռելներից Յարութիւն առաւ Հօր փառքով, նոյնպէս եւ մենք քայլենք նոր կեանքով. որովհետեւ, եթէ Նրա մահուան նմանութեամբ տնկակից եղանք Նրան, պիտի լինենք նաեւ Նրա Յարութեան նմանութեամբ» *(Հռոմ. 6:3-5):*

«Մկրտութիւնը խաչ է, որ խորհրդանշում է Քրիստոսի խաչելութիւնը: Մկրտութիւնը նաեւ գերեզման է մեզ համար. Քրիստոս մարմնով մեռաւ եւ թաղուեց, մենք նոյնպէս մեղքի համար խաչւում եւ մեռնում ու գերեզմանի մէջ ենք թաղում մեր մեղքերը» *(Սբ. Յովհան Ոսկեբերան, Ճառ Ժ):*

«Սրբարար Մկրտութեամբ մկրտուածը ջրի մէջ երեքանգամեայ ընկղմամբ կենսապարգեւ Յիսուսի աստուածախորհուրդ մահուան եւ երեքօրեայ թաղման նմանութիւնն է ստանում» *(Սբ. Դիոնիսիոս Արիոսպագացի, «Եկեղեցական քահանայութեան մասին», մաս 2-րդ, գլուխ Բ):*

Այն նոյն խորհրդով, որով Յիսուս եկաւ եւ աշխարհի մեղքն Իր վրայ վերցրեց ու մեռաւ, որպէսզի մահը ոչնչացնի եւ Իր Յարութեամբ հաստատի յարութիւնը, այդ նոյն խորհրդով էլ դու ես ջրի մէջ ընկղմւում, ինչպէս որ ասւում է. «Մկրտութեան ջրի մէջ «թաղուելով», ինչպէս Յիսուս թաղուեց գերեզմանում, դու պիտի յարութիւն առնես Նրա միւսանգամեայ Գալստեան ժամանակ՝ կենդանութեամբ նորոգուելու համար» *(Սբ. Կիւրեղ Երուսաղեմացի, «Կոչումն ընծայութեան», Բան Գ):*

«Մկրտուածները հրաժարւում են սատանայից, եւ նրանց մէջ մեռցւում է մեղքերի պատճառած մահը, որպէսզի երկրի վրայ այլեւս չապրեն մեղքերով: Քանի որ ինչպէս մեռեալն է մնջանում՝ անկարող դառնալով որևէ բան անելու, այդպէս էլ մկրտուածը մեռնում է մեղքերի համար եւ կենդանանում՝ արդարութեան համար, որովհետեւ նա Քրիստոսի կերպարանքն է առնում՝ Սուրբ Երրորդութեան շնորհներով: Այդուհետեւ նա սկսում է խորհել վերնային բաների մասին՝ ըստ Աւետարանի ճշմարիտ քարոզութեան, որը հաճելի է Անմահ Թագաւորին, եւ այդպիսով արդար, ճշմարիտ ու սուրբ վարքով հասնում է անմահների Կեանքի օթեւան՝ Յիսուս Քրիստոսի մօտ:

Այսպէս է իրականանում հոգեւոր Աւազանից վերստին ծնունդը. ախտաւորը վերստին է ծնւում՝ առանց ախտի, Ամենասուրբ Երրորդութեան շնորհներով ու մարդասիրութեամբ: Այդ մկրտուածները ո՛չ արիւնից են ծնւում, - ասում է, - եւ ոչ էլ մարդու կամքից, այլ Աստծո՛ւց ծնուեցին» *(Յաճախապատում, ճառ Բ):*

Մկրտութեան սրբարար խորհուրդը մարդկանց որդիներին Աստծոյ որդիներ է դարձնում եւ համարձակութիւն է տալիս արժանաւորապէս ասելու.

Հայր մեր, որ յերկինս ես,
սուրբ եղիցի անուն Քո:
Եկեսցէ արքայութիւն Քո:
Եղիցին կամք Քո
որպէս յերկինս եւ յերկրի:
Զհաց մեր հանապազորդ
տո՛ւր մեզ այսօր:
Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր,
որպէս և մեք թողումք
մերոց պարտապանաց:
Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն:
այլ փրկեա՛ զմեզ ի չարէ:
Զի քո է արքայութիւն
եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն

(Մատթ. 6:5):

Իսկապէս, «նրանք, ովքեր առաջնորդւում են Աստծոյ Հոգով, նրա՛նք են Աստծոյ որդիները. քանի որ չստացաք ծառայութեան հոգին վերստին երկիւղի մէջ ընկնելու համար, այլ ստացաք որդեգրութեան հոգին, որով աղաղակում ենք՝ Աբբա Հայր: Նոյն Ինքը Հոգին վկայում է մեր հոգուն, թէ Աստծոյ որդիներ ենք. եւ եթէ որդիներ ենք, ապա եւ՝ ժառանգներ. ժառանգներ Աստծոյ եւ ժառանգակիցներ Քրիստոսի» *(Հռոմ. 8:14-17):*

Եւ եթէ հաւատում ենք, որ Նա, Ով բնութեամբ Աստծոյ Որդի էր, եկաւ եւ շնորհի միջոցով մարդու որդի դարձաւ՝ ծնուելով Կոյսից, ուրեմն նմանապէս պիտի հաւատանք նաեւ, որ մենք՝ բնութեամբ Ադամի որդիներ լինելով, կարող ենք մեր այդ մարդկային բնութեամբ «կոյս» Աւազանից ծնուելով՝ շնորհի միջոցով Աստծոյ որդիներ դառնալ: «Դրա համար էլ, - ասում է սուրբ Սարգիս Շնորհալին՝ Յակոբոս առաքեալի Ընդհանրական նամակի մեկնութեան մէջ, «Նա Իր կամքով ծնեց մեզ ճշմարտութեան խօսքով» *(Սբ. Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն Յակ., 1:18, Ճառ Դ»):*

Իսկ սուրբ Խոսրով Անձեւացին Պատարագի խորհրդի իր մեկնութեան մէջ ասում է. «Աւազանը մեզ վերստին ծնում է, որպէսզի մենք որդիանանք

Աստծուն: Այն մեզ ազատում է մեղքերից՝ կենսագործելով անմահական կեանքով» *(Սբ. Խոսրով Անձեւացի, «Մեկնութիւն Պատարագի»):*

Շարականի մէջ էլ ասւում է. «Այսօր փարատուեցին նախամօր ծննդեան երկունքի տրտմեցուցիչ եւ խաւարաստեղծ ցաւերը, քանի որ մահուան եւ ապականութեան ենթակայ մարմնով ծնուածները Սուրբ Հոգու կողմից ծնւում են վերստին՝ երկնաւոր Հօր լոյսի որդիները լինելու համար» *(Շարակնոց):*

Դարձեալ, Սուրբ Հոգի Աստուած Քրիստոսի կամաւոր եւ փրկարար մահուան խորհրդով մկրտուածներին մաքրազարդում է սկզբնական մեղքի ախտից ու Իր շնորհներով նրանց դարձնում է տաճար՝ այնտեղ բնակուելու համար: Ահա թէ ինչու է սրբազան Պօղոս առաքեալը գրում հետեւեալը. «Չգիտէ՞ք, որ Աստծու տաճար էք դուք, եւ Աստծու Հոգին է բնակւում ձեր մէջ» *(Ա Կորնթ. 3:16):*

Իսկ ահա Սուրբ Գրիգոր Նարեկացին, խօսելով Մկրտութեան խորհրդի մասին, ասում է.

Ձիրք շնորհեց, քաւութիւններ հանդերձեց,
Քրիստոսի մահուամբ մկրտուածներիս
Իր բնակութիւնը մաքրագործեց,
Որին Հօր եւ Որդու հետ
Նաեւ Սուրբ Հոգին ներգործեց
Եւ ինքն Աստուած է՝

Խնկուած տիրապէս

Ամենայնը եւ ամենայնի մէջ:

(Սբ. Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», Բան ԼԴ)

Պետրոս առաքեալն էլ իր ընդհանրական նամակում գրում է. «Եւ դուք, իբրեւ կենդանի վէմեր, կառուցւում էք որպէս հոգեւոր տաճար, որպէս անարատ քահանայութիւն, որպէսզի Յիսուս Քրիստոսի միջոցով մատուցէք հոգեւոր պատարագներ, որոնք հաճելի լինեն Աստծուն» *(Ա Պետ. 2:5):* Առաքեալի այս խօսքը մեկնելով՝ սուրբ Սարգիս Շնորհալին ասում է. «Դարձեալ, եթէ մէկն անարատ քահանայութիւնը եւ հոգեւոր պատարագը չվերապահի միայն օծեալ քահանային, այլ այն ընդունելի համարի առհասարակ համայն ժողովրդի համար, որեւէ կերպ չի մեղանչի ճշմարտութեան դէմ, քանի որ, ինչպէս երեւում է, այդ իշխանութիւնը պարգեւուեց բոլոր առաքինի անձանց՝ լինելու հոգեւոր տաճար եւ անարատ քահանայ՝ հոգեւոր պատարագ մատուցելու համար: Ոչ այլ ինչ, քան միայն սեփական հոգին եւ միտքը՝ մարմնով հանդերձ, աստուածային հրով ողջակիզել Աստծոյ սիրո սուրբ Սեղանի վրայ: Դա այն բանական եւ կենդանի պատարագն է, որի մասին խոսում է մարգարէն. «Խոնարհ հոգին է, - ասում է, - պատարագն Աստծոյ, մաքուր սիրտն ու

խոնարհ հոգին Աստուած չի արհամարհում...» *(Սաղմ. 50:19):*

Այս հոգեւոր պատարագի մեծութիւնը տեսած լինելով՝ աստուածընկալ[7] Պօղոսը Հռոմեացիներին ուղղուած նամակում *(Հռոմ. 12:1)* պաղատագին ձայնով պահանջում է մաքուր հոգիներ ունենալ՝ այսպէս ասելով. «Աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, ողորմութեամբ Աստծու, որ պատրաստէք ձեր մարմինները որպէս զոհ կենդանի, սուրբ, աստուածահաճոյ. ա՛յդ է ձեր բանական պաշտամունքը» *(Սբ. Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն Ա Պետ., 2:5, Ճառ Դ):*

[7] Աստուածակիր, Աստծուն իր մէջ ունեցող, կրող:

Գլուխ Զ.
ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Արդ, Քրիստոսի սուրբ Եկեղեցու սուրբ խորհուրդներից մէկն էլ ապաշխարութիւնն է, որի միջոցով մենք Աստծուց թողութիւն ենք ստանում մեր գործած մեղքերի համար եւ արժանի ենք դառնում Արքայութեանը. «Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ Երկնքի արքայութիւնը մօտեցել է» *(Մատթ. 3:2):*

«Եթէ արհամարհում ես նրա բարութեան առատութիւնը եւ ներողամտութիւնն ու համբերութիւնը, չգիտե՞ս, որ Աստծոյ բարութիւնը քեզ ապաշխարութեան է տանում: Եւ քո խստասրտութեամբ ու անզիջող սրտով քո անձի դէմ բարկութիւն ես դիզում բարկութեան օրուայ եւ Աստծոյ արդար դատաստանի յայտնութեան օրուայ համար» *(Հռոմ. 2:4-6):*

Աստուած Իր համբերատար ներողամտութեամբ եւ մարդասիրութեամբ մեղաւորներին հնարաւորութիւն է տալիս կատարեալ զղջումով, խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ հրաժար-

ուել մեղքերից ու փրկուել, ինչպէս որ գրուած էլ է. «Բայց դու յիշի՛ր, որ իրար հետ դատ ենք ունենալու. նախ դու խոստովանի՛ր քո անօրէնութիւնները, որ արդարացուես» *(Ես. 43:26):*

Գործք առաքելոցում գրուած է, որ երբ սրբազան առաքեալները համարձակօրէն քարոզում էին ի-րենց հոգեփրկչական խօսքն ունկնդրելու համար ի մի հաւաքուած հրեայ ժողովրդին, այս հրեաները ազդուեցին սրբազան առաքեալների քարոզութիւ-նից եւ զղջացին իրենց սրտերում. «Այս լսելով՝ ներկաները զղջացին իրենց սրտերում եւ ասացին Պետրոսին եւ միւս առաքեալներին. «Ի՞նչ պիտի անենք, եղբայրնե՛ր»: Պետրոսը նրանց ասաց. «Ա-պաշխարեցէ՛ք, եւ ձեզանից իւրաքանչիւրը թող մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողութեան համար» *(Գործք 2:37-38):*

Այս ապաշխարութիւնը նեղ ու անձկալի մի դուռ ունի, սակայն այն տանում է դէպի յաւիտենական կեանքի ժառանգութիւնը, այն դէպքում, երբ աշ-խարհասիրութեան ու մեղսասիրութեան դուռը լայն եւ ընդարձակ է, սակայն տանում է կորստեան՝ դէպի յաւիտենական դատապարտութիւնը, ինչպէս որ վճռեց մեր Փրկիչ Աստուած՝ այս հրամանն ար-ձակելով. «Մտէ՛ք նեղ դռնով. ինչքա՜ն լայն է դուռը եւ ընդարձակ՝ ճանապարհը, որ դէպի կորուստ է

տանում, եւ բազմաթիւ են նրանք, որ մտնում են դրանով: Ինչքա՜ն անձուկ է դուռը եւ նեղ՝ ճանապարհը, որ տանում է դէպի կեանք, եւ սակաւաթիւ են նրանք, որ գտնում են այն» *(Մատթ. 7:13-14):*

Այս խօսքը մեկնելով՝ Յովհաննէս Ծործորեցին ասում է. «Այստեղ ասում է «նեղ»՝ նեղութիւնների պատճառով, ըստ առաքեալի այն խօսքի, թէ. «Բազում նեղութիւններով մենք պէտք է մտնենք այն հանգիստը» *(Գործք 14:21)*, և թէ՝ «Այս առժամանակեայ նեղութիւնը մեծ փառք է առաջ բերում մեզ համար» *(Բ Կոր. 4:17):* Ուստի նայի՛ր ոչ թէ դռան նեղ լինելուն, այլ թէ ո՛ւր է այն տանում, և ո՛չ թէ լայնութեանը, այլ թէ մինչեւ ուր է այն հասնում:

«Նեղ» է կոչւում այն, ինչն ամէն կողմից ճնշվում է՝ կամրջի նմանութեամբ, երբ մէկը ճանապարհով գնալիս վտանգի է ենթակայ եւ աջ ու ձախ չի խոտորւում: Իսկ «լայն» է կոչւում այն, որ մէկը ճանապարհից դուրս գալով՝ ընդարձակ տարածքում է շրջում՝ շեղուած լինելով ուղիղ փողոցից: Եւ արդարացիօրէն է «դուռ» ասում, որովհետեւ ասէս դռնից՝ այս կեանքից դուրս ենք գալիս՝ թողնելով այս աշխարհի տան մէջ մթերուած մեծ ունեցուածքը, նաեւ վշտերն ու նեղութիւնները: Ոմանք աշխարհում սակաւ վշտեր կրելուց յետոյ այդ դռնից ելնելով Կեանքին են յանդիպում, իսկ ոմանք էլ ընդարձակ

կեանք վայելելուց յետո դռան մօտ կորստեան են արժանանում: Իմացի՛ր նաեւ այն, որ ընդարձակ դռնով շատերն են ընթանում, ինչպէս ասում է Տերը, խաբուած լինելով հաճոյքներից եւ ճանապարհի առաջնորդի պատճառով գահավիժելով այնտեղ, ուր բազմած է կորուստը՝ սատանան, ըստ այս խօսքի. «Կան ճանապարհներ, որոնք ուղիղ են թւում, բայց նրանց ելքը դէպի դժոխքի հատակն է նայում» *(Առակ. 16:25):* Իսկ նեղ դռնով քչերն են ընթանում մեղմագնայ ընթացքի դժուարութեան պատճառով, քանի որ խաչ ու չարչարանքներ են սպասւում, նահատակութիւններ ու նեղութիւններ, սակայն այս ճանապարհի Առաջնորդը վերեւում բազմած Տէրն է՝ անմահ կեանքը Բաշխողը եւ Երկնքի արքայութիւնը Պարգեւողը» *(Յովհաննէս Ծործորեցի, «Մեկնութիւն Մատթ. 7:13-14»):*

Ապաշխարութեան զօրութեան մասին Շարակնոցում ասւում է, որ Քրիստոսի սուրբ զինուորներն այդ զօրութեամբ լցուած՝ սխրալի քաջութեամբ երկրից դէպի երկինք բարձրացան, եւ իրենց այդ վերընթացով մեզ էլ սովորեցրին նոյնն անել, ասել է թէ՝ թէպէտ մեծ նեղութիւն կրելով, սակայն մտնել ապաշխարութեան վերոնշեալ դռնով եւ երկնային հանգստին արժանանալ *(Շարակնոց):*

Մարդասէր Աստուած բացարձակապէս չի կամենում, որ մեղաւորները, յամառաբար մեղքի մէջ մնալով, մահուան մատնուեն եւ յաւիտենական դատապարտութեան արժանանան: Այլ Աստուած կամենում է, որ ամենքը խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ դարձի գան ու կատարելապէս թողութեան արժանանան, ինչի համար եւ Տէրը մարգարէների, առաքեալների ու սուրբ Եկեղեցու հոգեւոր հովիւների միջոցով ապաշխարութեան եւ մեղքերից հրաժարուելու հրաւէր է տալիս. «Լուացուէ՛ք, մաքրուէ՛ք, Իմ աչքի առաջ ձեր չար արարքները թօթափէ՛ք ձեզնից, վե՛րջ տուէք ձեր չարագործութիւններին: Սովորէք բարի՛ք գործել, արդարութի՛ւն փնտռէք, փրկէ՛ք զրկուածի՛ն, արդարադա՛տ եղէք որբի հանդէպ, իրաւո՛ւնք տուէք այրուն: Եկէ՛ք խօսենք իրար հետ, - ասում է Տէրը - եթէ ձեր մեղքերը արեան պէս կարմիր են, ապա ես ձեան պէս ճերմակ կը դարձնեմ, եթէ որդան կարմիր լինեն, կը սպիտակեցնեմ ինչպէս բուրդ...ե՛ս եմ, ե՛ս եմ այն նոյնը, որ ջնջում եմ իմ հանդէպ կատարած քո անօրէնութիւնները» *(Ես. 1:16-18 հմմտ. Ես. 43:25):*

Իսկ Երեմիա մարգարէն էլ ասում է. «Եւ այլեւս ամէն մէկն իր ընկերոջը չի սովորեցնելու, կամ ամէն մէկն իր եղբօրը չի ասելու, թէ՝ «Ճանաչի՛ր Տիրոջը», քանզի ամենքը՝ նրանց փոքրերից մինչեւ մեծերը,

ճանաչելու են ինձ, – ասում է Տէրը, – որովհետեւ նրանց անիրաւութիւնները պիտի ներեմ եւ նրանց մեղքերն այլեւս չպիտի յիշեմ» *(Երեմ. 31:34):*

Եզեկիէլի մարգարէութեան մէջ էլ ասւում է. «Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, ասա՛ Իսրայէլի այդ տանը. «Այսպէս խօսեցէ՛ք ու ասացէ՛ք՝ մեր մոլորութիւններն ու անօրէնութիւնները մեր մէջ են, եւ մենք դրանց մէջ մաշւում ենք, ինչպէ՞ս ազատուենք»: Ասա՛ նրանց. «Ամենակալ Տէրն ասում է՝ կենդանի եմ Ես եւ ամբարշտի մահը չեմ ուզում, այլ՝ նրա յետ կանգնելն իր չար ճանապարհից ու ապրելը: Դարձէ՛ք, յե՛տ դարձէք ձեր չար ճանապարհից, ինչո՞ւ մեռնէք, ո՛վ տունդ Իսրայէլի» *(Եզեկ. 33:10-11):*

Արդէն Նոր Կտակարանում Պետրոս առաքեալն ասում է. «Տէրը չի ուշացնի Իր խոստումը, ինչպէս կարծում են ոմանք, թէ ուշացած է, այլ համբերատար է ձեր հանդէպ. քանզի չի ուզում, որ որեւէ մէկը կորստեան մատնուի, այլ ուզում է, որ ամենքը ապաշխարեն» *(Բ Պետ. 3:9):*

Եւ ահա Յովհաննէս առաքեալն ասում է. «Իսկ եթէ խոստովանենք մեր մեղքերը, հաւատարիմ է Նա եւ արդար՝ մեր մեղքերը մեզ ներելու եւ մաքրելու համար մեզ ամէն անիրաւութիւնից» *(Ա Յովհ. 1:9):*

Սուրբ Գրիգոր Նարեկացին ապաշխարութեան մասին գրում է հետեւեալը.

Ինչպէս որ առանց Քրիստոս Աստծոյ մեր
հոգիներին փրկութիւն չկայ,
Եւ ոչ էլ առանց աչքի տեսողութեան՝ լոյսի
զուարճանք,
Եւ կամ արեւի քաղցրութիւն՝ առանց
արեւածագի,-
Այսպէս էլ առանց ծածուկ մեղքերի
խոստովանութեան
Եւ ինքնապարսաւ մեղադրանքների՝ չկայ
քաւութիւն:

(Սբ. Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», Բան Ծ)

Համաբարբառ Աւետարանի իր մեկնութեան մէջ սուրբ Եփրեմ Ասորին ասում է. «Բոլոր մեղաւորներն էլ ապաշխարութեամբ թողութիւն են ստանում. համարձակութեամբ կարող եմ ասել, որ չկայ այնպիսի մի մեղք, որի համար եթէ մէկն ապաշխարի, թողութեան չի արժանանայ» *(Սբ. Եփրեմ Ասորի, «Մեկնութիւն Համաբարբառ Աւետարանի», 10-րդ գլուխ):*

Սուրբ Խոսրով Անձեւացին էլ ժամակարգութեան իր մեկնութեան մէջ գրում է. «Նոյնիսկ եթէ բիւրաւոր չարիքներով խոցոտենք մեր հոգին, պիտի հաւատանք, որ ապաշխարելու դէպքում Քրիստոսի

մարդասիրութեան կողմից կարող ենք քաւութեան եւ թողութեան արժանանալ» *(Սբ. Խոսրով Անձեւացի, «Մեկնութիւն ժամակարգութեան»):*

Յովհաննէս աւետարանչի Ընդհանրական առաջին նամակի մեկնութեան մէջ, ի մասնաւորի մեկնելով Ա Յովհ. 1:8-րդ համարը («Եթէ ասենք՝ «Մենք ոչ մի մեղք չունենք», մենք մեզ ենք խաբում, եւ ճշմարտութիւն չկայ մեր մէջ»), սուրբ Սարգիս Շնորհալին ասում է. «Եթէ մենք չմոռանանք մեր մեղքերը, այլ մշտապէս մտապահենք դրանք, Աստուած կը մոռանայ, իսկ եթէ մենք մոռանանք, այդժամ Աստուած չի մոռանայ մեր գործած այդ մեղքերի մասին: Եւ սույն ոգով խոստովանութիւնից յետոյ անհրաժեշտ է ապաշխարութեան սպեղանին դնել վէրքի վրայ ու հաստատակամօրէն ամէն ջանք գործադրել այդ մոլեգին ախտը եւ միւս բոլոր մեղքերը վերացնելու եւ յաղթութեան դրոշը ծածանելու համար:

Արդ, Աստուած մեզնից այսպիսի խոստովանութիւն ու այսպիսի ապաշխարութիւն է պահանջում: Եւ երբ մենք մեզնից հասանելիքը կատարում ենք, տե՛ս, թէ ինչ է լինում՝ ըստ Սուրբ Գրքի *(Ա Յովհ. 1:9)* խօսքի. «Հաւատարիմ է Նա եւ արդար՝ մեր մեղքերը մեզ ներելու համար»» *(Սբ. Սարգիս Շնորհալի, «Մեկնութիւն Ա Հովհ. 1:8, Ճառ Բ»):*

Ամփոփելով՝ մէջբերենք սուրբ Գրիգոր Լուսաւորչի խօսքերը, որոնք գրի են առնուած «Յաճախապատում» ժողովածուի մէջ. «Նեղութեան մէջ թէ անդորրի՝ պէտք է մտերմութիւն ցուցաբերենք մեր Տիրոջ հանդէպ, եւ Նա մեզ կը շնորհի Իր չնուազող պարգեւները: Քանի որ Աստուած կամենում է բոլորի ապրելը, որպէսզի ժառանգաւոր լինեն անանց փառքերին եւ այն մեծութեանը, որ մեր Տէր Քրիստոս Յիսուսի մօտ է:

Եւ մեզնից իւրաքանչիւրս, որ Նրա վաստակներով ու առաքինութեամբ սրբուելով չար ցանկութիւններից՝ առիթ պէտք է հանդիսանանք շատերի փրկութեան համար, ճշմարտուած վարք ցուցաբերելով երկրից կը փոխադրուենք երկնաւոր հանգըստի քաղցրանուշ արքայութիւնը՝ միշտ Քրիստոսի հետ լինելու եւ Նրա երանելի բարիքները վայելելու համար:

Եւ ինչպէս որ մարդու հասակը կանգուն է մնում իր անդամներով, այդպէս էլ բարի գործերով կանգնեցւում եւ հաւատքով ամրանում է յոյսը, իսկ յոյսի միջոցով էլ՝ առաքինութեան գործերը:

Եւ այդպէս յորդորուելով Աստուածային սիրով՝ մարդ ստանում է Սուրբ Հոգու շնորհները, եւ վերնայինների հետ անմահ երկնայինների կեանքին ժառանգակից դառնալով՝ կենդանարար սէրը սուր-

բերի բնակարանում ծաղկում է գեղեցկագոյն փառ-
քով եւ անճառելիների ու մշտնջենաւորների շար-
քում միշտ փառաւորում է Ամենասուրբ Երրորդու-
թեանը յաւիտեանս յաւիտենից. ամէն» *(«Յաճախա-
պատում», Ճառ Զ):*

ՎԵՐՁԱԲԱՆ

Խորհրդաւոր «Դռների» մասին այս գրքոյկը շարադրուած է ըստ այն վարդապետութեան, որը մեզ համար ընկալելի ձեւով՝ մարգարէական, աւետարանական, առաքելական եւ հայրապետական պարզ խօսքերով յայտնուեց մեզ Սուրբ Հոգու շնորհների միջոցով:

Եւ արդարեւ, հոգեւոր հովիւների պարտաւորութիւնն է թէ՛ խօսքով եւ թէ՛ գրչով, թէ՛ առանձնաբար ու մանաւանդ Եկեղեցու սուրբ ատեանում՝ ժողովրդի մէջ քարոզել Կեանքի խօսքը՝ մարդկանց աստուածային բարեխնամ կամքը ճանաչեցնելու, նրանց աստուածահաճոյ առաքինի վարքով ապրելու, մոլութիւնների ու մոլորութիւնների արդիւնք եղող խորհուրդներից եւ գործերից ըստ ամենայնի հրաժարուելու պատգամը տալու նպատակով:

Աստուածային արդարութիւնը հենց այս պարտաւորութիւնն էր նախածանուցում Եզեկիէլ մարգարէին, որը եւ գրում է. «Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. «Մարդո՛ւ որդի, Ես քեզ դէտ կարգեցի Իսրայէլի այդ տանը. դու Ինձնից պատգամներ ես լսելու

եւ Իմ անունից սպառնալու ես նրանց: Երբ անօրէնին ասեմ՝ ստոյգ պիտի մեռնես, դու այլեւս չես զգուշացնելու նրան, ոչ էլ ասելու ես անօրէնին, որ զգուշանայ, յետ դառնայ իր չար ճանապարհից ու ապրի: Այդ անօրէնն իր անօրէնութեան մէջ է մեռնելու, եւ նրա արիւնը քեզնից եմ պահանջելու: Իսկ եթէ դու անօրէնին զգուշացնես, ու նա յետ չդառնայ իր անօրէնութիւնից եւ իր ճանապարհից, – այդ անօրէնն իր անօրէնութեան մէջ է մեռնելու, իսկ դու քեզ փրկելու ես: Եւ երբ արդարն էլ իր արդար գործերից շեղուի ու յանցանքներ գործի, նրա գլխին տանջանքներ եմ բերելու. ինքը մեռնելու է, որովհետեւ նրա կատարած արդար գործերը չեն յիշուելու: Բայց քանի որ դու նրան չես զգուշացրել, նրա արիւնը քեզնից եմ պահանջելու: Ապա եթէ դու զգուշացնես արդարին, որ նա մեղք չգործի, արդարն ապրելով պիտի ապրի, որովհետեւ զգուշացրել ես նրան. դու էլ քեզ պիտի փրկես» *(Եզեկ. 3:16-21):*

Յիշե՛նք մեր կենսատու Յիսուս Քրիստոսի աւետարանական առակը՝ նմանուելով բարի ու հաւատարիմ ծառաներին, որոնք Աստծոյ խօսքի քանքարը չանարգեցին, այլ հաւատարիմ եղան իրենց տիրոջը, ինչի շնորհիւ էլ գովասանքի ու վարձատրութեան արժանացան: Եւ երբեւէ չնմանուե՛նք այն չար ու վատ ծառային, որը չցանկացաւ իր ծառա-

յութիւնը հաւատարմութեամբ կատարել, այլ ծուլու-թեան պատճառով տարաւ-թաքցրեց իր քանքարնե-րը, ինչի հետեւանքով էլ տիրոջից արժանի պատիժ ստացաւ: Առակում պատմւում է. «Մի մարդ, հեռու երկիր գնալիս, կանչեց իր ծառաներին եւ իր ունեց-ուածքը նրանց տուեց. մէկին տուեց հինգ քանքար, միւսին՝ երկու եւ մի ուրիշին՝ մէկ. իւրաքանչիւրին ըստ իր կարողութեան. եւ գնաց: Ով հինգն առաւ, իսկոյն գնաց, դրանով գործ արեց եւ հինգ եւս շահեց: Նոյնպէս նա էլ, որ երկուսն առաւ, երկու եւս շահեց: Իսկ ով մէկն առաւ, գնաց հողը փորեց եւ իր տիրոջ դրամը թաքցրեց: Շատ ժամանակ անց, այն ծառաների տէրը եկաւ եւ նրանց հետ հաշիւ տեսաւ: Ով հինգ քանքար էր առել, մօտենալով՝ հինգ քանքար եւս տուեց ու ասաց. «Տէ՛ր, հինգ քանքար տուիր ինձ. արդ, ահաւասիկ վրան հինգ քանքար եւս շահեցի»: Իր տէրը նրան ասաց. «Ապրե՛ս, բարի՛ եւ հաւատարի՛մ ծառայ, որովհետեւ այդ քչի մէջ հաւատարիմ եղար, շատի վրայ կը կարգեմ քեզ. մտի՛ր քո տիրոջ ուրախութեան մէջ»: Ով երկու քանքարն էր առել, նա էլ մօտեցաւ ու ասաց. «Տէ՛ր, ինձ երկու քանքար տուիր, ահաւասիկ երկու այլ քանքար եւս, որ դրանց վրայ շահեցի»: Իր տէրը նրան ասաց. «Ապրե՛ս, բարի՛ եւ հաւատարի՛մ ծառայ, որովհետեւ այդ քչի մէջ հաւատարիմ եղար,

շատի վրայ կը կարգեմ քեզ. մտի՛ր քո տիրոջ ուրախութեան մէջ»: Մօտեցաւ նաեւ նա, որ մէկ քանքար էր առել, ու ասաց. «Տէ՛ր, գիտէի, որ դու մի խիստ մարդ ես, հնձում ես, ինչ որ չես սերմանել, եւ հաւաքում ես այնտեղից, ուր չես ցանել. վախեցայ. գնացի եւ թաքցրի քո այս քանքարը հողի մէջ: Արդ, ահա՛ւասիկ, քոնը՝ քեզ»: Տէրը պատասխան տուեց եւ ասաց նրան. «Չա՛ր եւ ծո՛յլ ծառայ, գիտէիր, որ հնձում եմ, ուր չեմ սերմանել, եւ հաւաքում այնտեղից, ուր չեմ ցանել. դու պէտք է իմ այդ դրամը լումայափոխների մօտ դնէիր, եւ ես, գալով, տոկոսով միասին պահանջէի այն, ինչ որ իմն է: Արդ, դրանից առէ՛ք այդ քանքարը եւ տուէ՛ք նրան, ով տասը քանքար ունի. քանի որ՝ ով ունի, նրան պիտի տրուի եւ ունեցածը պիտի աւելացուի, իսկ ով չունի, նրանից ունեցածն էլ պիտի վերցուի: Իսկ այդ անպիտան ծառային հանեցէ՛ք դուրս, արտաքին խաւարը. Այնտեղ կը լինի լաց եւ ատամների կրճտում»» *(Մատթ. 25:14-30):*

Նոյն միտքն է արտայայտում նաեւ սրբազան Պետրոս առաքեալը. «Իւրաքանչիւր ոք ինչպիսի շնորհ որ ընդունել է, ուրիշի հանդէպ թող նոյնը մատակարարի որպէս բարի տնտես Աստծոյ պէս-պէս շնորհների: Եթէ մէկը խօսի, թող այդ լինի Աստծոյ պատգամների նման: Եթէ մէկը մատակա-

րարի, թող այդ լինի այն զօրութիւնից, որն Աստուած շնորհում է, որպէսզի ամէն ինչում Աստուած փառաւորուի Յիսուս Քրիստոսի միջոցով, որին փա՛ռք եւ զօրութի՛ւն յաւիտեանս յաւիտենից. ամէն» *(Ա Պետ. 4:10-11):*

Իսկ ահա սրբազան Պօղոս առաքեալի խօսքերի համաձայն՝ երբ քարոզում ենք Կեանքի խօսքը, մեր հոգեւոր սպասաւորութեան պարտաւորութիւնն ենք կատարում ու զերծ ենք մնում դատապարտութիւնից՝ յաւիտենական փառքի վարձատրութիւնն ընդունելով: Իսկ եթէ անհոգ ենք գտնւում, ծուլանում ենք ու մեր կամքին ենք ծառայում, այդժամ յաւիտենական դատապարտութեան սոսկալի «վա՛յ»-ին ենք արժանանում. «Եթէ աւետարանում եմ, այդ ինձ համար պարծանք չէ, քանզի պարտաւորութիւն է դրուած իմ վրայ: Բայց վա՛յ է ինձ, եթէ չաւետարանեմ: Եթէ կամովին եմ անում այդ, վարձ կայ ինձ համար, իսկ եթէ՝ ակամայ, ծանր պարտականութիւն է ինձ յանձնուած» *(Ա Կորնթ. 9:16-17):*

Դարձեալ, Պօղոս առաքեալն ասում է. «Այս բանն եմ վկայել տալիս Աստծոյ եւ Յիսուս Քրիստոսի առաջ, որ դատելու է կենդանիներին եւ մեռածներին՝ Իր յայտնութեան օրը, երբ գայ Իր արքայութեամբ: Եւ դու քարոզի՛ր Աստծոյ խօսքը, շարունա՛կ յայ-

տարարիր այն, ժամանակին լինի թէ տարաժամ, յանդիմանի՛ր, սաստի՛ր, յորդորի՛ր՝ կատարեալ համբերատարութեամբ ուսուցանելով...Արթո՛ւն եղիր ամէն ինչում, նեղութիւնների մէջ համբերի՛ր, աւետարանչի գործե՛ր արա, լիուլի կատարի՛ր քո պաշտօնը» *(Բ Տիմ. 4:1-2, 5):*

Արդ, ուշադրութեամբ ունկնդրե՞նք մեր երանելի սուրբ վարդապետ Յովհաննէս Ծործորեցուն, որը մեր ուղղափառ սուրբ Եկեղեցու հոգեւոր հովիւներին քաղցրաբարբառ խօսքերով խրատում է նմանուել մեր Նախահայրապետ եւ Լուսաւորիչ սուրբ Գրիգորին՝ գրելով այսպէս. «Քրիստոսի հօտին ու թանկագին գառներին դէպի երկինք ճանապարհին առաջնորդողնե՛ր եւ արածեցնողնե՛ր: Միակ Հօր Միածինն այդ գառներին գնել է Իր արեամբ ու մահով: Մեր Լուսաւորչի տասնհինգամեայ չարչարանքների շնորհիւ նրանք Աստծոյ սեփական ժողովուրդ են դարձել եւ ձրիաբար ու առանց վարձի տրուել են ձեզ՝ որպէս ժառանգութիւն: Այդ գառներին մի՛ մոլորեցրէք լեռներում ու անմարդակոխ ճանապարհներում եւ նրանց մի՛ մատնէք գայլերի ու գազանների ձեռքը: Չէ՞ որ քաջ Հովիւն այդ գառներին Իր ուսերի վրայ դրած *(Ղուկ. 15:5)*՝ դէպի Երկինք բարձրացրեց ու նրանց խառնեց ճշմարտագնացների թուին:

Մի՛ նմանուէք վարձկաններին, որոնք միայն մարմնի համար են սերմանում, իսկ բանական գառների հոգիներն անտեսում են: Խոցուածների ու վիրաւորների հանդէպ անխնամառու, անգութ եւ անայցելու մի՛ եղէք *(Ղուկ. 10:29-37),* քանի որ յանուն նրանց Քրիստոս յանձն առաւ խոցեր ու վէրքեր ստանալ:

Եկեղեցու Նաւի նաւաստինե՛ր, այդ սրբազան Նաւը կենսածուփ ծովի ալեկոծութեանն ու փոթորիկներին մի՛ մատնէք, որպէսզի չլինի թէ խորտակէք ու այդպիսով կորստեան դատապարտէք այն անմեղ մարդկանց, որոնց յանձն էիք առել դուրս բերել հեղձուցիչ ծովից: Դուք աստուածային այգու բանական եւ երկնաւոր տունկերի այգեպան ու պահապան եք կարգուել եւ ինքներդ էլ ճաշակում եք այդ այգու պտղից՝ ակն ունենալով ամենաբարի Տիրոջից երկնային վարձատրութիւն ստանալուն: Ուրեմն թոյլ մի՛ տուէք, որ գազաններն ապականեն աստուածային այգու պտղաբեր որթատունկի ճիւղերը, որոնք ճշմարտութեամբ են արմատաւորուած:

Աստծոյ պատուիրանների նկատմամբ զգուշաւորութեամբ անսասա՛ն պահէք այդ այգու պարիսպը: Ոտնակոխ մի՛ արէք հաւատքի աստուածահաստատ ուխտի պատուիրանները: Մի՛ խորտակէք

հայրենաւանդ ժառանգութեան ցանկապատը, որ-պէսզի չխայթուեք չարաթոյն օձից՝ անբուժելի վէրք ստանալով: Իմաստուն բժիշկնե՛ր եւ հոգիների վե-րակացունե՛ր, դուք աստուածային բժշկարանն ու-նեք ձեր ձեռքում, ուստի անհնազանդ օձի կողմից խայթուածների ու բնական եւ անբնական ցաւերով պաշարուածների նկատմամբ անգութ ու անողորմ մի՛ եղէք: Ցաւերը փարատելու փոխարէն չարիքները մի՛ «առողջացրեք» *(Յօր 13:4):*

Աստուածային առաքեալ Պօղոսը ձեզ եւ բոլոր հաւատացեալներին խրատ է կարդում ու ասում է. «Յիշեցէ՛ք ձեր առաջնորդներին, որոնք ձեզ Աստծոյ խօսքն ասացին: Նայելով նրանց կեանքի ընթացքի վախճանին՝ հետեւո՛ղ եղէք նրանց հաւատին» *(Եբր. 13:7):* Արդ, դուք նոյնպէս յիշէ՛ք ձեզ դէպի կեանք ու փրկութիւն առաջնորդողին եւ մտաբերէ՛ք ձեր աստուածագութ հօր, հոգիների լուսաւորչի ու Քրիստոսի ճգնաւոր նահատակ սուրբ Գրիգորի անտանելի չարչարանքները: Մի՛ մոռացէք, թէ նրա հողանիւթ մարմնի այդ սխրանքն ինչպիսի զար-մանք էր պատճառել երկնային զօրքերին: Պատկա-ռէ՛ք նրա այդ սոսկալի չարչարանքներից ու խստա-կրօն վարքից, չէ՞ որ այժմ դուք էլ նրա արեամբ, քրտինքով ու արտասուքով ցողուած հաւատի ան-դաստանի պտուղներն եք վայելում:

Արդ, նայե՛նք սուրբ Գրիգոր Լուսաւորչի ապրած կեանքին, թէ ինչպէս ապրեց այս աշխարհում կամ թէ ինչպիսին էր նրա կեանքի վախճանը, քանի որ այդ իսկ է ոչխարներին հովուութիւն անելու դուռը, որով սուրբ Գրիգորը ներս մտաւ՝ չարչարանքների միջով անցնելով: Նա հայ ժողովրդին «ձեռք բերեց» իր մարմնի ոսկորների քերուելու գնով: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն իր կողերից հոսող արեամբ այս ժողովրդին Աստծոյ Եկեղեցի դարձրեց, ինչպէս որ մի ժամանակ նրա Տէրն էլ Իր կողակայլակ արեամբ համայն մարդկութիւնն ու աշխարհն էր Աստծոյ Եկեղեցու վերածել: Յանուն իր վայելչագեղ գառների՝ Հայոց հայրապետը խորովուեց կրակի վրայ, սարսափելի տանջանքների ենթարկուեց՝ կախաղանի վրայ բարձրացուած վիճակում անգամ աղօթելով իր հաւատացեալ հօտի համար:

Նա տասներեք տարի շարունակ խաւար գբում՝ չարաթոյն օձերի մէջ էր բնակւում, եւ դա անում էր մեր փոխարէն, որպէսզի մենք մեղքի գբի մէջ չմնայինք, օձի խայթոցների չենթարկուէինք եւ թունալի ախտերի մէջ չընկղմուէինք: Սա է հոգեւոր հովուութեան դուռը, եւ ով այս դռնով չի մտնում, նա գող է ու աւազակ *(Յովհ. 10:1):*

Ահա այդպէս է, որ ժառանգութիւնը սեփականւում է, եւ ոչ թէ՝ արիւնակցական ազգակցութեան

միջոցով, քանի որ այստեղ խօսքը Քրիստոսի հօտին տէր կանգնելու մասին է: Քրիստոսի գառների գինը սա է, եւ ոչ թէ մեծաքանակ արծաթը, քանի որ մերժելի են բոլոր նրանք, ովքեր արծաթով են ընտրուել:

Արդ, հայեացք գցէք նրա՛ կեանքի վախճանին, ով ըստ այս օրինակի ներս մտաւ ոչխարների դռնով, նայէ՛ք եւ զարմացէ՛ք: Քանի որ նա իր ժողովրդին Աստծոյ ժողովուրդ դարձնելուց եւ քահանայապետական գահին բարձրանալուց յետոյ, աշխարհից հրաժարուելով, անապատային ու անմարդաբնակ վայրեր հեռացաւ, մերժեց պատիւը, փախաւ փառքից եւ դարձաւ Աստծոյ զրուցակիցը, հրեշտակներին երգակից դարձաւ ու սրբաբանօղ՝ սրբասաց սերովբէների հետ (*Յովհաննէս Ծործորեցի, «Մեր սուրբ հայր Գրիգոր Լուսաւորչի գովեստը»*):

«Ոսկեղենիկ» մատենաշարով տպագրուած գրքեր

Ա. Յովհան Ոսկեբերան, Ապաշխարութեան պտուղներ (Քարոզներ եւ Ճառեր), 2019



Բ. Յակոբ Նալեան, Առաքինի կեանքի ուղին (Հոգեւոր զրոյցներ), 2020



Գ. Յովնան Արք. Տէրտէրեան, Պատգամներ (Ասոյթներ եւ Թեւաւոր խօսքեր), 2020



Դ. Կարապետ Արք. Պալատեցի, Տարեկան Քարոզգիրք (Ընտրանի), 2021



Ե. Գարեգին Եպս. Խաչատուրեան, Հովիւի խօսքեր, 2021



Զ. Պաղտասար Դպիր, Գրքոյկ շահաւէտ, 2022



Է. Մատթէոս Ա. Կոստանդնուպոլսեցի, Աստուածային Շնորհների Դուռը, 2023



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեղրածորան գիրքը. Յովնան Արք. Տէրտէրեան 3

Երկու խօսք 5

ԱՌԱՋԱԲԱՆ 11

ԳԼՈՒԽ Ա. ՔՐԻՍՏՈՍ՝ ԴՈՒՌԸ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ 15

ԳԼՈՒԽ Բ. ՀԱՒԱՏՔԻ ՄԱՍԻՆ 22

ԳԼՈՒԽ Գ. ՅՈՅՍԻ ՄԱՍԻՆ 32

ԳԼՈՒԽ Դ. ՍԻՐՈՅ ՄԱՍԻՆ 43

ԳԼՈՒԽ Ե. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ 53

ԳԼՈՒԽ Զ. ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ 63

ՎԵՐՋԱԲԱՆ 73

«Ոսկեղենիկ» մատենաշարով տպագրուած գրքեր 83

ՄԱՏԹԷՈՍ Ա. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՇՆՈՐՀՆԵՐԻ ԴՈՒՌԸ

Գրաբարից աշխարհաբար փոխադրութիւնը
եւ ծանօթագրութիւնները՝
Գեւորգ Սրկ. Կարապետեանի

Խմբագիր՝ Նորայր Պօղոսեան

Տպագրութիւն ԱՄՆ Արեւմտեան թեմի
Լոս Անջելէս 2023